

## ՀՈԳԵ-ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ ԵՎ ՄԵԾ ԳԱՂԱՓԱՐԸ

Հոգու եւ նյութի որակապես տարբեր աշխարհներն առարկայորեն ընդհանուր կապված են, ուրեմն եւ՝ ներդաշնակելի. կա նյութի աստիճանական ոգիացում եւ հոգու նյութական իրացում՝ միաժամանակ:

Հասարակական կյանքում, ուր մարդիկ հիմնականում ապրում են նյութի աշխարհում (առաջնություն տալով կյանքի նյութական կողմին) եւ քչերն են ձգտում հոգու աշխարհ (այստեղ փնտրելով կյանքի իմաստը), այս երկու աշխարհներն իրար են կապված Գաղափարի դաշտով: Այս դեպքում բոլորին շաղկապում եւ շարժման մեջ է դնում ընդհանուր Մեծ գաղափարը, եւ ամեն մարդ ընտրում է գործունեության համապատասխան դաշտ (հոգեւոր կամ նյութական)՝ հանուն այդ Մեծ գաղափարի: Բնականաբար, խոսքն այստեղ հոգեզուրկ նյութապաշտների կամ էլ միայն իրենց «հոգու փրկությանը» մտահոգների մասին չէ, որոնք եսակենտրոն են եւ ազգային-հասարակական կյանքին անհաղորդ:

Դասական իմաստությունն ասում է, որ *նյութականը միջոց է հոգեւորի իրացման համար*, հետեւաբար՝ ստորադաս նրա հանդեպ: Եվ մարդը, որ հանուն Մեծ գաղափարի՝ իբրեւ գործունեության դաշտ, գիտակցաբար ընտրում է նյութական աշխարհը (խորքում մնալով աննյութական, հոգեւոր անձ), նույնքան նվիրյալ ու գաղափարական է, որքան հոգեւոր կյանքով ապրողը:

Ինչպես ուսուցանում է հայ ազգայնական գաղափարաբանությունը, *Մեծ գաղափարը, որով ներդաշնակվում են հոգեւոր եւ նյութական աշխարհները՝ Ազգ-Հայրենիքն է*, որը ե՛լ հոգեւոր է, ե՛լ նյութական: Իբրեւ գաղափար՝ այն Մեծ է, քանզի բացարձակ է ու հավիտենական, իսկ մարդու ճանապարհն իմաստաբանորեն արժեւորելի է, եթե միտված է Բացարձակին ու Հավերժին, ասել է՝ Մեծ գաղափարին:

Եվ հզոր են այն ազգերը, որոնց հոգե-նյութական աշխարհն ամբողջական է, որոնք չեն հակադրում հոգեւորն ու նյութականը եւ վերջինը ծառայեցնում են առաջինի իրացմանը:

**ՀԱՅՈՒԹՅԱՆ ԱՅԼԱԴԱՎԱՆ ԵՎ ԱՅԼԱԼԵԶՈՒ  
ԽՄԲԵՐԸ ՍԻՐԻԱ-ԼԻԲԱՆԱՆՈՒՄ  
Գեւորգ Յազըճյան**

Տարբեր ժամանակներում եղել են ու այսօր էլ կան բնօրրանից դուրս ապրող հայկական հավաքականություններ, որոնք այս կամ այն չափով պահպանել են իրենց ազգային ինքնագիտակցությունը: Նրանցից են Սիրիայում եւ Լիբանանում ապրող այլադավան եւ այլալեզու հայկական խմբերը:

Հայկական մայր զանգվածից դավանանքային օտարումը լայն դուռ է բացում լեզվական եւ առհասարակ ազգային օտարման առջեւ: Սակայն Սիրիա-Լիբանանում նկատելի է մյուս երեւույթը. լեզվական օտարումն է առավել արագացնում դավանանքային-ազգային օտարումը:

Հստակեցնենք. այլադավան ասելով հասկանում ենք այն հավաքականությունները, որոնք չեն պատկանում սփյուռքի հայկական երեք հիմնական եկեղեցիներին՝ Հայ առաքելական, Հայ կաթոլիկ եւ Հայ ավետարանական:

\* \* \*

Օսմանյան կայսրությունն իր ոչ մուսուլման քաղաքացիների հետ հարաբերությունները կարգավորում էր «միլլեթ»-ների համակարգի շնորհիվ: 1830-ից պետությունը ճանաչում էր հայկական երկու միլլեթ՝ Հայ առաքելական եւ Հայ կաթոլիկ եկեղեցիները՝ հանձինս նրանց Կ. Պոլսի պատրիարքությունների: Ավետարանականները, անկախ իրենց ազգությունից, կազմում էին առանձին միլլեթ: Օսմանյան կայսրության փլուզումից հետո «միլլեթ»-ների համակարգը համարյա նույնությամբ ժառանգեցին նրա փլատակների վրա կազմավորված Սիրիայի եւ Լիբանանի պետությունները: Նրանցում քաղաքացիական բնույթի որոշ հարաբերությունների գրանցումն ու կարգավորումը (ծնունդ, ամուսնություն, ամուսնալուծություն, մահ, ժառանգական որոշ հարցեր) պետությունը զիջել է «միլլեթ»-ներին (արաբերենում՝ «թաիֆա», այսինքն՝ համայնք): Դա ավելի շեշտված է հատկապես Լիբանանում, որի պետական կառուցվածքն ինքնին դավանանքային է (պետական ազդեցիկ պաշտոնները, խորհրդարանի ու կառավարության անդամները բաժանված են համայնքների միջեւ): Սույն փաստը շատ կարեւոր է՝ ըմբռնելու համար հետագա շարադրանքը, քանի որ այս պետությունների քաղաքացիները

տարաբնույթ հարցեր լուծելիս անպայման պետք է անցնեն իրենց պատկանած կրոնական համայնքի խողովակով: Այս իրավիճակը մի կողմից՝ օժանդակում է այդ համայնքների ղեկավար ինստիտուտների դիրքերի պահպանմանը, մյուս կողմից՝ պատկանելության որոշակի գիտակցություն է առաջացնում կամ պահպանում համայնքի անդամների մեջ:

### **Լիբանան**

Պատմական որոշ աղբյուրներ վկայում են, որ 12-րդ դարի սկզբին խաչակիրները Լիբանանի լեռներում հանդիպել են հայկական բազմաթիվ բնակավայրերի: Ենթադրվում է, որ նրանց հայազգի բնակիչները հետագա դարերում ամբողջովին ձուլվել են մարոնիտ եկեղեցու հետևորդներին, եւ նրանց հետ էլ 15-17-րդ դարերում ասորախոսությունից անցել արաբախոսության: Այս հայկական զանգվածը հիմնովին ձուլված է: Հայկական թույլ ինքնագիտակցություն այսօր պահպանվել է այն գաղթականների սերունդների մոտ, որոնք, ընդունած լիներով կաթոլիկությունը եւ հալածվելով Հայ առաքելական եկեղեցուց, 18-րդ դարի առաջին կեսին հաստատվել են Լեռնալիբանանի որոշ շրջաններում ու ժամանակի ընթացքում ձուլվել մարոնիտներին: Նրանց սերունդների մոտ կա թույլ հիշողություն իրենց հայկական ծագման մասին. ոմանք պահպանել են հայահունչ ազգանուններ, հայերեն ձեռագիր կամ տպագիր մատյաններ, հայկական ուրիշ մասունքներ: Սակայն 18-րդ դարի այս գաղթականների, ինչպես նաեւ հաջորդ 150-200 տարիներին Լիբանան գաղթած հայազգի կաթոլիկների մի զգալի զանգվածը պահպանել է կապը Հայ կաթոլիկ եկեղեցու հետ, բայց հայոց լեզվից օտարվելով՝ ազգային ինքնագիտակցության էական նահանջ է արձանագրել: Այսօր արաբախոս հայ կաթոլիկներն իրենք իրենց ավելի շուտ լիբանանցի են զգում, քան հայ: Այս զանգվածի համար Հայ կաթոլիկ գլխավոր եկեղեցիներում ծիսակատարությունները կատարվում են երկու լեզուներով՝ հայերեն եւ արաբերեն:

Լիբանանի այլադավան հայոց մի փոքր խումբ էլ լատին եկեղեցու հետևորդ է: Սրանք սերունդներն են մասնավորաբար Կիլիկիայում 19-րդ դարում լատին միսիոներների որսացած հայազգիների: Լիբանանահայ լատինների քանակը ենթադրաբար չի անցնում հարյուր հոգուց: Նրանք բաժանվում են երկու մասի՝ հայախոսներ եւ արաբախոսներ. առաջին ենթախմբի մոտ գերակշռում է հայկական ինքնագիտակցությունը, երկրորդի մոտ՝ արաբականը: Վերջինիս եւ արաբախոս հայ կաթոլիկների շրջանում նպատակային գործունեություն ծավալելու պարագայում կարելի է զգալիորեն բարձրացնել նրանց հայկական ինքնագիտակցության աստիճանը:

Կապված արտահոսքի հետեւանքով թվաքանակի փոքրացման հետ՝ Լիբանանում նախապես հայահոծ որոշ բնակավայրերի (Սայդա եւ Ջահլե քաղաքներ ու վերջինիս շրջակայքը) հայերի սերունդները վերջին տասնամյակներին արագ լեզվափոխվում են՝ ուղեկցված ազգային ինքնագիտակցության զգալի նահանջով: Նրանց եւ առհասարակ արաբախոս ենթախմբերի մոտ շատ բարձր է խառնամուսնությունների տոկոսը (Լիբանանում, ըստ Հայ առաքելական առաջնորդարանի տվյալների, այդ համայնքում այս դարասկզբին արձանագրվել է 33% խառնամուսնություն: արաբախոսների մոտ այս տոկոսն անհամեմատ մեծ է), որը եւս նպաստում է այս հայազգի զանգվածների արագ ուժացմանն ու վերջնական ձուլմանը:

Լիբանանում իսլամությունն ընդունած հայերը աննշան քանակ են կազմում: Լիբանանյան մամուլում երբեմն պատահում են հայությունը հուշող ազգանուններով մուսուլմանների անուններ (օրինակ՝ ալ-Արմանի, Արմենագի...): Նրանք հիմնականում իսլամի սուլունի եւ շիա համայնքների անդամներ են: Դուրզիական համայնքի Մահեր տոհմն իրեն հայկական ծագում է վերագրում: Իսլամությունն ընդունած բոլոր հայազգիների մոտ հայկական ինքնագիտակցությունը գրեթե զրոյական մակարդակ ունի:

Վերջին տարիներին պատահում են փաստեր, երբ անձնական ինչ-ինչ հաշիվներից մղված (քաղաքացիության ստացում, ամուսնալուծություն, բազմակնություն...) հայազգիները կամովին դավանափոխվում են: Նրանք մեծ մասամբ մտնում են քրիստոնեական մեծ համայնքներից մեկնումեկի (մարոնիտներ, հույն ուղղափառներ, հույն կաթոլիկներ), հազվադեպ՝ իսլամի սուլունի կամ շիա համայնքների մեջ:

## Սիրիա

Սիրիայում այլադավան եւ այլալեզու հայկական հավաքականություններն այսօր հիմնականում համախմբված են աշխարհագրական հինգ շրջաններում:

1. Միջերկրական ծովի առափնյա շրջան (հիմնականում՝ Լաթաքիա, մասամբ՝ Թարթուս եւ Բանիաս քաղաքներ), բացառությամբ հայախոս ու հայադավան Քեսապի ենթաշրջանի:

2. Որոնդես գետի, ավելի շուտ՝ նրա ոռոգած Ռուճի հովտի շրջան (ծովափի ու Համա – Հալեպ առանցքի միջեւ):

3. Հալեպ քաղաքը:

4. Սիրիական անապատն ու նրա քաղաքները (Ռակկա, Դեր Ջոր):

5. Հյուսիս-արեւելքի շրջանը (Հասաբե եւ Կամիշլի քաղաքներ, Մալիքիյե, Թել Աբիադ, Թել Քոչաք, Դերիկ, Ամուդա ավաններ ու շրջակայք):

Ա. Ծովափի շրջան.- Հաշվում է 1000-1200 հոգի: Գաղթօջախը կազմվել է հիմնական երեք հոսքերի հետեւանքով. մինչեւ Մեծ եղեռնը այնտեղ բնակվածների սերունդներ, Մեծ եղեռնի ու Կիլիկիայի պարպումի հետեւանքով հաստատվածներ, Քեսապից տեղափոխվածներ:

Ամենից խոցելիւն առաջին ենթախումբն է, որը հիմնականում արաբախոս է՝ չնչին բացառություններով: Ու թեւ այս ենթախմբի անդամների մի մասը Հայ առաքելական համայնքի անդամ է, այսուհանդերձ, նրանց մոտ ազգային հանրության (տվյալ պարագայում՝ հայության) պատկանելությունը փոխարինված է ազգայնականության արեւմտյան տեսաբան Անդերսոնի «երեւակայական համայնքով» (տվյալ պարագայում՝ քրիստոնեական համայնքով): Այս ենթախմբի անդամները վատ են ընդունում միայն այն դեպքերը, երբ իրենց պատկանած «քրիստոնեական համայնքի» որեւէ անդամ ամուսնանում է մուսուլմանի հետ: Նույն երեւութները նկատվում են նաեւ Մեծ եղեռնից հետո հաստատվածների սերունդների, նվազ չափով՝ Քեսապից տեղափոխվածների մոտ:

Բ. Ռուճի հովտի շրջան.- Ներկայանում է Արամո, Ղնեմիե, Յակուբիե, Կնիե գյուղերով ու հովտի մյուս բնակավայրերում ապրող հայազգիներով: Առաջին երկու բնակավայրերից շատերը հայրենադարձվեցին Խ. Հայաստան՝ 1946-1947 թվականներին, իսկ մնացողները բարբառը փոխարինեցին արաբերենով: Յակուբիեն ու Կնիեն եւս արաբախոս են, առաջինը պատկանում է Հայ առաքելական եկեղեցուն, երկրորդը՝ լատին համայնքին:

Ռուճի հովտի հայության այլադավան եւ այլալեզու չորս խմբերի էթնոլեզվա-դավանական հարցերի մանրամասն վերլուծությունը կատարել է Հակոբ Չոլաքյանն իր «Անտիոքի մերձակա Ռուճի հովտի հայերը» պատմագիտության թեկնածուի հայցման ուսումնասիրության մեջ (ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտ, Երեւան, 2002թ., սեպտեմբեր): Իր շահեկանության համար այստեղ արտատպում ենք ատենախոսության «Վերջաբանից» հետեւյալ հատվածը.

«1946 թվականին Սուրիո ամբողջական անկախացումեն ետք, երբ արաբական ազգայնականությունը դարձավ պետական գաղափարախոսություն եւ սկսան վերացվիլ գաղութարար իշխանությանց հետքերը, լատինացած հայերը հայտնվեցան անտեր մնացածի վիճակի մեջ: Քանի որ Սուրիո մեջ անոնք չէին կրնար «ֆրանսանալ», անոնք նախընտրեցին գաղթել օտար երկրներ կամ ալ՝ ավելի արաբանալ (քանի որ վերջինս էր այս պարագային առավելություններ տվող ազդակը)՝ մնալով հանդերձ լատինադավան, քան վերադառնալ իրենց մայր եկեղեցվո եւ հայ ազգին գիրկը:

Հայկական տեղեկատվական ընդհանուր դաշտին մեջ, ինչպես նախորդ տասնամյակներուն, այսօր եւս գրեթէ ամբողջովին բացակա է Որոնդես գետի ջուրերու ոռոգած Ռուճի հովիտի հայկական կղզեխումբը: Այս շրջանը, հայ ազգագրության տեսակետէն, այսօր կներկայացնէ խայտաբղետ պատկեր մը, որը կարելի է ամփոփել հետեւյալ խումբերուն մեջ.

1. Արաբացած-իսլամացած հսկա զանգված մը, ամբողջովին կորսնցուցած իր հայկական ծագման ինքնագիտակցութիւնը (*Նրանց նախնիները Հայ եկեղեցու կողմից անտէր մնալու պատճառով կիսաբռնի իսլամացվել են 17-18-րդ դարերուն: Այսօր այս խումբը հաշվում է 500-700 հազար հոգի- Գ. Յ.*):

2. Արաբացած (արաբախոս), սակայն Հույն ուղղափառ կամ Հույն կաթողիկէ (Մելքիթ) եկեղեցւոյ դավանանքն ընդունած հայեր (Ընկըզիկ գյուղը, մասամբ նաեւ՝ Ջրդէյդէ գյուղը, քիչ թվով անհատներ Ջըսըր Շուղուր քաղաքին եւ Որոնդեսի հովիտի զանազան գյուղերուն մեջ), որոնց մոտ շատ հեռավոր նշույլներ կան իրենց հայկական ծագման մասին:

3. Արաբախոս, սակայն լատին եկեղեցւոյ դավանանքն ընդունած հայ հավաքականութիւններ (Կնիէ գյուղը, նաեւ՝ քանի մը ընտանիքներ Յակուբիէ եւ այլ գյուղերու մեջ), որոնց մոտ առավել առկայ է իրենց հայկական ծագման ինքնագիտակցութիւնը:

4. Արաբախոս, բայց Հայ առաքելական եկեղեցւոյ դավանանքը պահպանած Յակուբիէ գյուղը: Այս գյուղի բնակիչներն ունին հայկական ինքնագիտակցութիւն, թեւէ արաբախոս ըլլալու իրողութիւնը զիրենք որոշակիորէն կը տարբերակէ հայու ամբողջական ինքնագիտակցութիւնն ունեցող դասական կերպարի ընկալումէն:

Վերը հիշատակված առաջին խումբի վերադարձը հայկական ինքնագիտակցութեան՝ բացառված է, մանավանդ, որ այդ խումբի անդամները իրենց ողջ էութեամբ, հարյուր տոկոսով արաբացած ու իսլամացած ըլլալով, որեւէ ցանկութիւն չեն դրսեւորէր այս ուղղութեամբ...

Երկրորդ խումբի պարագային, հայութեան գիրկն անոր վերադարձը չափազանց դժվար է: Այս խումբի անդամներուն քրիստոնյա ըլլալու իրողութիւնը եւ իրենց հայկական ծագման մասին աղոտ հիշողութիւնները եթէ որոշակի հույսեր կներշնչեն, սակայն այդ ցանկութիւններու գործնականացման հավանականութիւնը շատ չնչին է: Այս հավաքականութեան մարդիկ իրենք եւս չեն գիտակցիր հայութեան գիրկը վերադառնալու օգտակարութիւնը եւ համակերպված են ու գոհ իրենց ներկա ազգային-դավանանքային-լեզվական վիճակէն:

Երրորդ խումբի անդամները, բժախնդրորէն մշակված քաղաքականութեան մը իրականացման պարագային, կարող են իրենց հայկական

ինքնությանը վերադառնալ, չբացառելով նույնիսկ անոնց հայախոս դառնալու հեռանկարը: ...Այս գյուղերուն մեջ կան մարդիկ, որոնք անհատական ճիգեր կթափեն վերադառնալու մայր ազգին գիրկը, նույնիսկ հրաժարելով արաբախոսութենեն: ...Այս հավաքականությանց վերահայացմանը նպաստող կարելոր գործոն են վերջին տարիներուն այդ գյուղերուն վերածվիլը Չալեպի հայախոս հայոց սիրված ամարանոցներու եւ հայախոս ու հայկական ազգային արժեքներ կրող մարդոց հետ անոնց շփումներու անհամեմատ բազմացումը:

...Չայության մեջ ամբողջովին վերստին ձուլելու լավագույն պայմանները կան չորրորդ հավաքականության մոտ»:

Չակոբ Չոլաքյանը գտնում է, որ հնարավոր է «առհասարակ Մերձաւոր Արեւելքի հայազգի բոլոր լատինները վերստին հայությանը շաղկապել՝ Վատիկանի թույլտվությամբ զանոնք լատին եկեղեցվո ապազգային հովանիեն փոխանցելով Չայ կաթողիկե եկեղեցվո հովանիին, ինչպես այդ տեղի ունեցավ 1946 թվականին Քեսապի շրջանին մեջ՝ առանց որեւէ լուրջ ցնցումի»: Լիովին համաձայն ենք այս դատողությանը: Մնում է, որ Չայ կաթոլիկ հոգեւորականությունը գործնական քայլերի դիմի այս ուղղությամբ՝ եթե, իհարկե, ցանկություն ունի...

Գ. Չալեպ.- Քաղաքի արաբախոս հայազգիները հիմնականում լատին են կամ հայ կաթոլիկ: Առաջինները Կնիեից տեղափոխվածներ, Կիլիկիայից գաղթականների ու 18-19-րդ դարերուն լատին միսիոներների դավանափոխածների սերունդներ են: Արաբախոս լատինների մոտ հայկական ինքնագիտակցությունը չափազանց թույլ է, եւ, որքան էլ տարօրինակ թվա, «հրահրվում» է ոչ հայազգի լատինների կողմից, որոնք նրանց լիարժեք լատին չեն ընկալում: Այդուհանդերձ, Չալեպի հայազգի արաբախոս լատինների մոտ եւս գերակշռում է անդերսոնյան «երեւակայական համայնքի» գիտակցությունը:

Վիճակը շատ չի տարբերվում Չալեպի արաբախոս հայ կաթոլիկների մոտ, որոնք Մարդինի ու շրջակայքի արաբախոս հայ կաթոլիկների՝ Մեծ եղեռնից հետո քաղաքում հաստատվածների, ինչպես եւ մինչեւ Մեծ եղեռնը քաղաքում բնակություն հաստատած հայ կաթոլիկների սերունդներ են: Նրանց մոտ էլ առկա է անդերսոնյան համայնքի գիտակցությունը: Չալեպի հայախոս ու արաբախոս հայ կաթոլիկների միջեւ ճեղքն այնքան խորն է եղել, որ հայախոսներն անցյալ դարի վերջերին նախընտրեցին առանձին եկեղեցի կառուցել՝ միայն հայալեզու ծեսերով՝ քան շփվել իրենց արաբախոս դավանակիցների հետ՝ թեկուզ երկլեզու (հայերեն-արաբերեն) ծեսերի ժամանակ: Փաստորեն, Չալեպում այսօր կան հայ կաթոլիկ երկու հավաքականություններ, որոնք ազգային ինքնագիտակ-

ցության առումով էապես տարբերվում են իրարից՝ հիմնականում պայմանավորված լեզվական գործոնով:

Վերջին տարիներին Հալեպի հայության մոտ դիտվում են կամովին իսլամանալու առանձին երեւոյթներ, մասնավորաբար՝ արաբ մուսուլման երիտասարդների հետ հայուհիների (սիրիահայ եւ բուն ՀՀ-ից) ամուսնությունների հետեւանքով: Կրոնափոխությունն ուղեկցվում է լեզվափոխությամբ, թեւ ոչ քիչ պարագաներում իսլամն ընդունած հայուհիների զգալի մասը պահպանում է իր լեզուն, ամուսնու թույլտվության դեպքում՝ նաեւ իր քրիստոնեական հավատքը, թեւ քրիստոնյա ազգակիցները նրանց վանում են իրենցից՝ որպէս հավատուրացների ու ազգուրացների:

Դ. Սիրիական անապատի շրջան.- Մեծ եղեռնի տարիներին հազարավոր հայեր սիրիական անապատի մահվան ճանապարհների վրա պարտադրված ընդունեցին իսլամը: Նրանց մեծ մասը թեւ հետագայում վերադարձավ իր հավատքին ու ազգին, այսուհանդերձ, ոչ քիչ թվով հայազգիներ (հատկապէս՝ կանայք) նախընտրեցին կամ ստիպված եղան իսլամն ընդունել ու արաբանալ: Նրանց սերունդները պահպանել են իրենց հայկական ծագման հիշողությունը, եւ ոմանք նույնիսկ չեն դադարում իրենց հայազգի հարազատներին փնտրելուց: Այդուհանդերձ, այս իսլամացած-արաբացածների մոտ հայկական ինքնագիտակցությունը գտնվում է շատ ցածր մակարդակում, եւ, փաստորեն, անհնար է նրանց վերահայացումը:

Ե. Հյուսիսարեւելյան Սիրիա.- Այս տարածաշրջանում կողք կողքի համերաշխորեն գոյակցում են Հայ առաքելական եւ Հայ կաթոլիկ համայնքների անդամները, որոնք լեզվական տեսակետից բաժանվում են երեք ենթախմբերի՝ հայախոսներ, արաբախոսներ եւ քրդախոսներ: Ըստ ազգային ինքնագիտակցության վայրընթացի ցուցիչի՝ հաջորդականությունը հետեւյալն է՝ Հայ առաքելական հայախոսներ, Հայ առաքելական քրդախոսներ, Հայ կաթոլիկ հայախոսներ, Հայ կաթոլիկ արաբախոսներ, Հայ առաքելական արաբախոսներ, Հայ կաթոլիկ քրդախոսներ (վերջիններիս քանակը շատ փոքր է): Այս բոլոր հավաքականությունները կան Հայկական Միջագետքի (Աղձնիքի) տեղաբնիկներ են, կան Սասունի ու Բշերիկի շրջաններից տեղափոխվածներ: Բշերիկցիները, չնչին բացառություններով, քրդախոս են. քրդախոս է նաեւ ծագումով սասունցիների մի մասը. այլալեզու լինելով հանդերձ՝ նրանց մոտ ազգային ինքնագիտակցությունն ու հայկական հայրենասիրությունը գտնվում են բարձր մակարդակի վրա, որի արտահայտությունն են 1940-ականների վերջի եւ 1960-ականների հայրենադարձություններին մասնակցությունն ու իրենց հայկական հույզերի արտացոլումը եղող քրդերեն բազմաթիվ երգերը:



Հայտնվելով հայախոս միջավայրում (Հալեպ, Բեյրութ, ԶԶ)՝ մասնավորաբար նոր սերունդը շատ արագորեն հայախոս է դառնում ու համարյա հավասարվում «դասական» հայի մակարդակին: Այդուհանդերձ, քրդախոս հայերի մոտ դիտվում են քրդական ինքնագիտակցության առանձին դրսեւորումներ, որոնք շուտով անհետանում են դասական հայկական միջավայրում հայտնվելու դեպքում:

Ուշագրավ է, որ այս տարածաշրջանում տեղաբնակ ասորիների մի մասի մոտ նկատվում է հայկական որոշակի ինքնագիտակցություն. նրանցից ոմանք սեփական «հայկականությունն» ապացուցելու համար վկայակոչում են իրենց... հայախոսությունը:

\* \* \*

Այս հոդվածում փորձ արեցինք ներկայացնելու Լիբանանում եւ Սիրիայում այլադավան եւ այլալեզու հայկական խմբերի համայնապատկերը: Խոստովանում ենք, որ պատկերն իրականում շատ ավելի բարդ է, քան այստեղ է ներկայացված:

Հակոբ Չոլաքյանը գտնում է, որ Հայ եկեղեցին ինքը պետք է նախաձեռնի «Սփյուռքի տարածքին ուժացած հայկական հավաքականություններն իրենց ազգին գիրկը վերադարձնելու պատմական առաքելությունը՝ առաջնորդվելով ոչ այնքան Հայ եկեղեցվո, այլ հայ ազգի ընդհանրական ու գերագույն շահերով»: Չբացառելով այս հույժ կարեւոր աշխատանքում Հայ եկեղեցու դերը՝ այդուհանդերձ, գտնում ենք, որ ՀՀ-ն, որպես հայոց ազգային պետություն, ինքը պետք է ստանձնի այս առաքելությունը: Մի՞թե հարկ կա պարզաբանելու, թե հայկական նման հավաքականությունները կկարողանան գործածվել ինչպես հոգուտ հայ ազգի ու հայոց ազգային պետության, այնպես էլ՝ նրանց դեմ: Հետեւաբար, տվյալ հարցը ոչ միայն գիտական նշանակություն ունի, այլեւ, ու առաջին հերթին՝ ազգային անվտանգության խնդիր է:

**ՄԱՅԿԱՆ ԱՐՎԵՍՏԸ ԵՎ  
ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ  
Ռուբեն Խուրշուդյան**

Հազար տարով, հազար դարով առաջ թե ետ, ի՞նչ կա որ,  
Ես եղե՛լ եմ, կա՛ն, կլինեմ հար ու հավետ, ի՞նչ կա որ,  
Հազար էսպես ձեւեր փոխեմ, ձեւը խաղ է անցավոր,  
Ես միշտ հոգի, տիեզերքի մեծ հոգու հետ, ի՞նչ կա որ:

*Հովհ. Թումանյան*

Քաղաքակրթությունների բախումը, որի մասին կանխագուշակում էին քաղաքագետները, XXI դարում կարծես դառնում է իրականություն: Մահմեդական արմատականներին, շնորհիվ պայքարի ընտրած արդյունավետ եւ տպավորիչ մեթոդների, հաջողվեց սարսափեցնել ռացիոնալիզմի՝ երեւույթների նկատմամբ զուտ բանական վերաբերմունքի վրա հիմնված արեւմտյան մարդու գիտակցությունը: Նշյալ գիտակցության համար, որի գերագույն արժեքը անհատն է, եւ, հետեւաբար, ամենաթանկ բանը՝ կյանքը, գործնականում անընթացելի է հանուն որեւէ աննյութական նպատակի կյանքի զոհաբերումը: Որպես հետեւանք՝ Արեւմուտքում ծնվեցին խունապային տրամադրություններ, որոնք մասամբ փոխանցվեցին նաեւ Հայաստան, ինչը բավականին վտանգավոր է, քանզի կարող է դառնալ պարարտ հող պարտվողական հոգեվիճակների համար:

Արդյո՞ք մահվան վախի հաղթահարումը բնորոշ է միայն մահմեդական քաղաքակրթությանը: Դեռեւս մեր թվարկությունից առաջ VI դարում հնդարիական «Երանելու երգը» գրական հուշարձանում վերոհիշյալ հիմնահարցը բարձրացվել էր ամբողջ խորությամբ եւ ստացել սպառիչ լուծումներ: Այդ համաշխարհային ճանաչում գտած գործում (հայերեն այն սանսկրիտից թարգմանել է Հրաչյա Աճառյանը), որը երկխոսություն է Բացարձակի մարմնավորված կերպարի եւ նրա երկրպագուի միջեւ, խոսքը ոչ միայն սեփական մահը արհամարհելու, այլ նաև հանուն արդարության վերականգնման բարձր գաղափարի՝ ուրիշի կյանքը կասեցնելու իրավունքի մասին է:

Եվ երբ երկրպագուն, խուսափելով արյունահեղությունից, երկխոսության սկզբում իր անհամաձայնությունն է հայտնում այդ արդար նպատակ

ունեցող պայքարին մասնակցելուն, Բացարձակի մարդկային մարմնավորումը, ընդգծելով, որ նման վարքը «անարժան է Արիների, հակառակ երկնից եւ ամոթաբեր», առաջ է քաշում հետեւյալ հայեցակարգը. «Ոչ ողջերին են լալիս իմաստունները եւ ոչ մեռյալներին: Չի եղել երբեք, որ ես գոյություն չունենայի, ոչ էլ դու, ոչ էլ այլ իշխանները եւ երբեք չպիտի լինի, որ մենք դադարենք գոյությունից ապագայում: Ինչպես մահկանացու մարմնի մեջ հաջորդում են իրար մանկություն, երիտասարդություն եւ ծերություն, նույնպես հետո հոգին ստանում է մի նոր մարմին, եւ իմաստունը չի տազնապում այստեղ... Այս փոփոխելի մարմինները առաջանում են հավիտենական, անջնջելի մի հոգուց: Նա, ով կարծում է, թե սպանում է, եւ նա, որ կարծում է, թե սպանվում է, սրանք երկուսն էլ սխալվում են: Նա չի սպանում, նա չի սպանվում»:

Քաջ իմանալով, որ ոչ բոլորն են ընդունակ ընկալելու հոգու հավերժության եւ անմահության գաղափարը, Բացարձակի մարդկային մարմնավորումը փոխլրացնում է իր հայեցակարգը հորդորներով, որոնց հիմքում դրված են ռազմիկ արիի պատկերացումները իր խավին վերաբերող պարտավորությունների եւ պատվո կանոնի մասին. «Արդար պատերազմից դուրս Կշատրիայի (սանսկր.՝ ռազմիկի) համար ոչինչ լավ բան չկա: Եվ եթե դու այս արդար պատերազմը չմղես, քո պարտականությունը եւ քո պատիվը մերժելով, մեղք կգործես: Եվ քո անպատվությունը մարդիկ կպատմեն միշտ. զգայուն մարդու համար անպատվությունը մահից ավելի վատ է: Երկյուղեցող կռվից փախած պիտի կարծին քեզ իշխանները եւ նրանք, որ քեզ մեծահոգի էին կարծում, պիտի արհամարհեն: Բազում թշնամանքներ պիտի տեղան քեզ վերա քո թշնամիները, եւ պիտի նախատեն քո անկարողությունը, սրանից ավելի ծանր ի՞նչ կա: Եթե մեռնես, երկինքը պիտի շահես, եթե ապրես, պիտի տիրես երկրին, ուրեմն, վեր կաց, կռվելու վճռականորեն»:

Չզոր գաղափարները վարակիչ են: Չնդարիների մոտեցումները մահվանը տարածում գտան ոչ միայն արիների բնական շրջանում, այլ նաեւ դրա սահմաններից դուրս: Խոսքը, մասնավորապես, ճապոնացիների մասին է:

Միջնադարում ապրող եւ գործող սամուրայ Թայրո Շիգետուկիի մոտ մենք կարդում ենք. «Նրան, ով մտադրվել է անցնել ռազմիկի ուղիով, հարկ է միշտ՝ ամեն օր եւ ամեն գիշեր հիշել մահվան մասին: Չի՞շի՞ր մահվան մասին նոր տարվա առաջին առավոտը, հիշի՞ր նրա մասին հին տարվա վերջին գիշերը»:

Ինչո՞վ է բացատրում ճապոնացի ռազմիկը նման մոտեցումը. «Ամեն շնչավորի կյանքը անցողիկ է եւ կարճատեւ, իսկ ռազմիկինը՝ կրկնակի... Միայն նա, ում շնորհված է հասկանալ, որ այս օրը ոչ միշտ կարող է

դառնալ վաղվա օր, միայն նա, ով գիտակցում է, որ իշխանի յուրաքանչյուր հանձնարարականը կարող է լինել վերջինը այս կյանքում, միայն նա, ով ամեն անգամ հայրական տան շենքի վրայով անցնում եւ ծնողներին գրկում է ինչպես վերջին անգամ՝ միայն նա կարող է լինել սիրալիր եւ հավատարիմ ծառա իր իշխանի համար, միայն նա կլինի ուշադիր եւ հոգատար որդի իր ծնողների համար»:

Իմաստուն ռազմիկն այսպես է ամփոփում իր միտքը. «Կարելորդ սամուրայի համար՝ օր ու գիշեր, լուսաբացից մայրամուտ, օրվա մեջ 24 ժամ կատարել իր ռազմի պարտքը եւ պարտավորությունները, իսկ հանգստի հազվագյուտ թոպեներին պարապեցնել միտքը խորհրդածություններով եւ դատողություններով ամեն երկրային անցավորության մասին, ըմբռնել մահվան անխուսափելիության խորհուրդը»:

Ինչքան էլ բարձր եւ վեհ հնչեն Շիգետուկիի մտքերը, նրանք չեն համեմատվի ճապոնական կայսրի կարճ եւ ամփոփ, սակայն բովանդակային առումով շատ խոր հետեւյալ ձեւակերպման հետ, որը մեջքերել է Գարեգին Նժդեհին իր «Խուստուփյան կանչերում». «Եթե խորապես գիտակցենք, որ սերը դեպի հայրենի երկիրն ու ժողովուրդը ավելի՛ բարձր է կանգնած Մեծ ու գեղեցիկ Արեւին, քան մեր հայրենիքի ամենաբարձր լեռները՝ այն ժամանակ մահը ամեն մեկիս համար թռչնի փետուրից էլ թեթեւ կթվա»:

Սակայն հեռավոր ճապոնական կղզիներից վերադառնանք արիների նախահայրենիք՝ Չայկական բարձրավանդակ: Առաջին մեզ հայտնի արին՝ Չայկ դյուցազնը, հակամարտվելով անարդարությանը՝ ի դեմս Տիտանյան Բելի, լինելով զտարյուն արի, որին բնորոշ է հարգանքը կյանքի նկատմամբ, չի ուզում զրկել Բելին կյանքից եւ առաջարկում է վերջինիս հեռանալ:

Եվ միայն ստանալով բացասական պատասխան՝ նոր դիմում է ծայրահեղ միջոցի՝ Բելի ոչնչացմանը, իր զինակիցներին պարզաբանելով սույն որոշումը նրանով, որ «կամ կմեռնենք եւ մեր ազգը Բելի ծառայության տակ ընկնի, կամ մեր մատների հաջողությունը նրա վրա ցույց տանք, նրա ամբոխը ցրվի եւ մենք հաղթություն տանենք»:

Մովսես Խորենացու «Չայոց պատմությունից» արված այս փոքրիկ մեջքերումից պարզ երևում է, որ վախը մահվան նկատմամբ հայ արիների մոտ բացակայում է, ավելին՝ առկա է միայն հսկայական պատասխանատվություն սեփական ազգի ճակատագրի նկատմամբ: Նահապետ Չայկը հզոր հնատիպ է (հնատիպերը, ըստ Կարլ Գուստավ Յունգի, ընկալման եւ ըմբռնողության ազգովի ժառանգած ձեւերն են), որը մարմնավորում է հայ տեսակի աշխարհընկալումն ու պատմական փորձը եւ, իր հերթին, ձեւավորում նրա բնավորությունն ու վարքը: Այդ առումով,

հայ ժողովուրդը, անկասկած, ժառանգեց Հայկ Նահապետի հնատիպից ինչպես կյանքի ծարավը, այնպես էլ արհամարհանքը մահվան նկատմամբ:

Քրիստոնեության ընդունումը, հակառակ ոմանց պնդմանը, չաղավաղեց նշյալ հնատիպային գծերը: Իմաստասեր Հայկ Ասատրյանը, որպես օրինակ բերելով Մամիկոնյան տոհմի գործունեությունը, ընդգծում է, որ *«Մամիկոնյաններին հաջողվեց Հիսուսի մոլեռանդությամբ մահով մահը հաղթահարել, այսինքն՝ որոշակիություն դնել նպատակի, վճռականություն՝ գործի եւ բովանդակություն՝ պատմության մեջ»*: Համամիտ լինելով Ասատրյանի այդ մտքին՝ Գարեգին Նժդեհն անում է մի չափազանց կարեւոր հայեցակարգային հավելում: Նա ընդգծում է, որ կյանքն ու մահը հայրենիքին ծառայեցնող Մամիկոնյանները ինացյալ մահվան կեսարներ էին, *«որոնց համար ռազմարվեստը մահարվեստ էր, այսինքն՝ մահվան դեմ հաղթական կանգնելու, մահից զորավոր հանդիսանալու արվեստ»*:

Նժդեհն առաջինն էր, ով բարձրաձայնեց *մահվան արվեստին* տիրապետելու անհրաժեշտության մասին: Այո, հայկական հնատիպը ապրել է ապրում է մեր հոգեկանում: Ավելին, նա դարձավ աղբյուր Մամիկոնյանների սխրագործությունների համար: Մամիկոնյանները, հավերժանալով ազգի պատմական հիշողությունում, իրենց հերթին, դարձան հնատիպեր:

Ռուս նշանավոր գիտնական Լեւ Գումիլյովը մարդկանց, որոնց *«հակաէգոիստական բարոյականության հիմքում հանրության շահերը գերազանցում են կյանքի ծարավը եւ հոգսը սեփական ժառանգների մասին»*, անվանում է պասիոնարներ (լատիներեն *passio* նշանակում է կիրք)՝ հանելով այդ եզրի բովանդակությունից էգոիստական բարոյականությունը սնուցող բնազդները:

Ազգային անվտանգության տեսանկյունից խիստ կարեւոր է, որ էթնոսում նման մարդիկ ունենան բարձր տեսակարար: Համաձայն Գումիլյովի, պասիոնարությունը ժառանգական հատկանիշ է՝ հետելյալ առանձնահատկությամբ. այն, որպես կանոն, փոխանցվում է ծոռներին՝ անցնելով-թողնելով որդիներին եւ թոռներին: Գիտնականը այդ հանգամանքով է բացատրում այն փաստը, որ պասիոնարության վերելքի ժամանակաշրջանները փոխարինվում են ընկճման ժամանակաշրջաններով, երբ պասիոնարական լարվածության մակարդակը կտրականապես ընկնում է:

Լինելով նուրբ էթնոհոգեբան՝ Նժդեհը չէր կարող չնկատել, որ XX դարի 30-ական թվականներին սփյուռքահայության մեջ խիստ պակասավոր էր դարձել այդ պասիոնարությունը: *«Եթե մեր սերունդները մտածեին, ապրեին եւ գործեին օրվա հայու նման՝ այսօր հայությունից արելի տակ մնացած կլինեի մի սեղմ տապանագիր միայն»*, - խոր ցավով արձանա-

գրում է նա: Իբրեւ ելք՝ Նժդեհն առաջ քաշեց մահվան արվեստի հետեւյալ հիմնադրույթները՝

1. Որպեսզի ցեղը ու հայրենիքը ապրեն, նրանց համար մեռնելու կամք ունեցիր: Իբրեւ հայ մարդ անպետք է նա, ով չունի այդ կամքը: Իսկ ով դեմ է այդ կամքի մշակմանը հայության մեջ՝ նա ներքին թշնամի է մեր Ցեղի եւ Չայրենիքի:

2. Մեռնելու կամք - դա ներքին ինքնաբուխ այն զգացումն է, ավելի ճիշտ՝ ներքին մղումը, որ ուխտվածին ուժ, արիություն եւ ուրախություն է տալիս մեռնելու իր Չայրենիքի եւ Ցեղի համար: Կա՞ այդ կամքը - ասել է՝ ենթական հաջողել է հաշտեցնել իր անձը իր ցեղի հավիտենականի հետ. ասել է՝ նա այլեւս գտած է ինքն իրեն, այլեւս ինքնաճանաչ է, որով եւ՝ տեր իր ցեղի թաքուն ուժերին:

3. Նմաններին վարողը իշխանությունը եւ օրենքը չեն. սրանք չեն ուղարկվում, այլ գնում են մեռնելու, որովհետեւ իրենք են մեռնել ուզում: Անպարտելի է նա, ով մահն է ընտրում իրեն առաջնորդ: Այսպես վարվել, ասել է՝ մահը դարձնել ներքին զորություն, կյանքի ներուժ եւ հաղթանակի սկզբունք:

4. Ձինվորական բարոյականը չի ասում հաղթանակի բոլոր դեպքերում, այն ասում է՝ հաղթականորեն մեռնել գիտցիր բոլոր պայմաններում: Մահվամբ է փորձում մեզ հավիտենականը, եւ վայ նրան, ով պարտվեց մահից. նա արժանի չէ Չայրենիքին, հավերժության: Մահվան դեմ հաղթանակելով է նվաճվում կյանքը, ապրեցվում հայրենիքը: Մահը տրված է մարդուն՝ այն հաղթահարելու համար:

5. Խորապես մեղանչում է մարդը՝ մահվան գաղափարը հավիտենական կորուստի հետ կապելով: Կորուստ չկա տիեզերքում - կա անդադար մի շարժ, որի ընթացքում կերպարանափոխվելով հոսում է ամեն ինչ: Կա աստիճանական ոգիացումը նյութի, ոգու անվերջ զարգացում, կատարելագործում կա: Չլինեք ոգու անմահությունը՝ չէր լինի նրա կատարելիության ձգտումը, նրա առաջընթացը, որի ճամփի վրա ամեն մի խորհող էակի կյանքը մի առաջաքայլ է:

6. Բարեկամ, երբ հավիտենական բաժանումը դարձավ անխուսափելի՝ աշխարհից քաշվիր այնպես, ինչպես արեւն է քաշվում: Չկա՞ մահ, կա անցում մի այլ ոլորտ: Անմեռ է մեզ սկզբնավորողը, մեզ շնչավորող զորությունը, բանը, ոգին: Մի՞թե մեռնում է լույսի ճառագայթը՝ արեւին, իր սկզբնաղբյուրին վերադառնալով: Վախը դադարում է, վտանգը տեղի է տալիս, մահը մեռնում է, հենց որ մարդու որդին իր գիտակցության ամբողջ զորությամբ կրկնում է.- ե՛ս էլ Աստծո որդին եմ:

Մահարվեստի այս դրույթները չեն պարունակում ուղղակի հանձնառույթներ: Սա որոշակի հոգետեխնիկա է, որի նպատակն է փոխել առօրյա

մանր խնդիրների լուծմանը միտված գիտակցությունը, էապես ընդլայնել այն՝ դրանով իսկ մեծացնելով անձի հոգեֆիզիկական կարողությունները եւ տալ նրան հնարավորություն՝ հանգիստ եւ հուսալի կերպով գործելու գերլարվածության պայմաններում, երբ մահվան վտանգի սարսափը կաթվածահար է անում այդ հոգեւեւաֆիզիկային չտիրապետողին:

Այսպիսով, արհամարհանքը մահվան նկատմամբ, ինչպես ցույց է տալիս վերոշարադրվածը, ամենեւին էլ մահմեղական արմատականների «մենաշնորհը» չէ: Մասնավորապես մեզ՝ հայերիս ի սկզբանե հայտնի է եղել մահարվեստը, որը՝ շնորհիվ մեր ոգու ընդերքում հավերժորեն բնակվող հերոսների հնատիպերի, չի մոռացվել: Սակայն մեր հերոսական հնատիպերը կարող են կյանքի կոչվել եւ ստանալ զանգվածային տարածում միայն այն դեպքում, երբ համապետական մակարդակով կլուծվի նորահաս սերնդի հայրենասիրական դաստիարակության խնդիրը:

Հայաստանին եւ ընդհանրապես համայն հայությանն ուղղված մարտահրավերների բնույթն այնպիսին է, որ պահանջում է պասիոնարության մակարդակի սրընթաց վերելք: Ի տարբերություն Գումիլյովի, որն այն կապում է բացառապես կենսաբանական գործոնի հետ, մենք համոզված ենք, որ համապատասխան դաստիարակությունը կարող է բերել ցանկալի արդյունք եւ Նժդեհի վստահությամբ ասում ենք. «*Հայրենապաշտական դաստիարակություն - ահա՛ մեր փրկության խարիսխը*»:

**ՉԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՆ ՈՒԿՐԱԻՆԱՅՈՒՄ  
ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ  
Գազիկ Տեր-Հարությունյան**

Այսօր արդեն ակնհայտ է, որ Ուկրաինայում գործընթացները ձգձգելու եւ միջանկյալ լուծումներ գտնելու նախագահ Կուչմայի փորձերը կարող են միայն մասնակի հաջողությունների հանգեցնել, այն է՝ իշխանափոխությունը կատարել հնարավորինս փափուկ տարբերակներով: Պուտինի հետ վերջին հանդիպման ընթացքում Կուչմայի արտասանած խոսքերը, թե ընտրություններից հետո ձեւավորվել է մեկ այլ Ուկրաինա, թերեւս ամենաճշգրիտ ձեւով են արտացոլում իրականությունը: Նկատենք նաեւ, որ այդ հանդիպման ընթացքում Պուտինն ակնարկեց Ուկրաինայի մասնատման վերաբերյալ, այսինքն՝ այդ երկրի արեւելյան շրջաններում պետք է սպասել անջատողական միտումների սաստկացում:

***Աշխարհաքաղաքական արձագանքներ***

Անկասկած, Ուկրաինայում կատարվածը հսկայական ազդեցություն է ունենալու Եվրասիայում տեղի ունեցող գրեթե բոլոր քաղաքական եւ տնտեսական գործընթացների վրա: Բավական է հիշատակել Պուտինի ելույթը Նյու Դելիում, որտեղ նա առաջին անգամ իր քաղաքական կարիերայի ընթացքում սուր քննադատության ենթարկեց արեւմտյան տերություններին: Քաղաքական առումով գուցեւ շրջադարձային այդ ելույթի մի մասն էլ նվիրված էր Ռուսաստան – ՉԺՀ – Հնդկաստան հարաբերությունների սերտացման անհրաժեշտությանը եւ բազմաբեւեռ աշխարհակարգի ձեւավորմանը: Թերեւս պատահական չէր նաեւ այն, որ Պուտինի ելույթին հետեւեց ճապոնիայի նախարարների խորհրդի քարտուղար Յոսոդայի հայտարարությունը, թե այդ երկիրը մշակում է այլ երկրների ռազմակայաններին կանխարգելիչ հարվածներ հասցնելու հնարավորությունը: Այսպիսով՝ կարելի է ամրագրել ոչ միայն Ռուսաստան – Արեւմուտք հարաբերությունների վատթարացումը, այլ նաեւ գլոբալ մասշտաբի առճակատումների միտումը:

Անշուշտ, հակասություններն արեւմտյան եւ արեւելյան ուկրաինացիների միջեւ օբյեկտիվ են եւ ունեն պատմական արմատներ: Սակայն այդ հակասություններին սկզբունքային բնույթ եւ անհանդուրժողականություն հաղորդելն արդեն քաղաքական տեխնոլոգիաների գործն է: Այն, ինչ



կատարվեց եւ կատարվում է Ուկրաինայում, խոշոր աշխարհաքաղաքական ծրագիր էր, որն իրագործեցին արեւմտյան մի շարք տերութուններ, առաջին հերթին ԱՄՆ-ը՝ օգտագործելով եւ հատուկ ծառայությունները, եւ միջազգային կառույցները:

Հատկանշական է, որ Ռուսաստանի համար անբարենպաստ զարգացումներն Ուկրաինայում զուգորդվեցին Հյուսիսային Կովկասում տեղի ունեցած իրադարձություններով, այդ թվում՝ վերջերս մանկապարտեզներում երեխաների զանգվածային թունավորման դեպքերով: Նման գործողությունները բնորոշ են տեղեկատվական պատերազմների երրորդ սերնդին: *(Հիշենք, թե ինչպես իրաքյան պատերազմի օրերին Չինաստանում բռնկվեց «ատիպիկ պնեւմոնիայի» համաճարակ, որը որոշ փորձագետների կարծիքով՝ հարուցվել էր ԱՄՆ-ի կողմից: Դրա նպատակն էր շեղել միջազգային հանրության ուշադրությունն Իրաքից, եւ միեւնոյն ժամանակ յուրահատուկ զգուշացում էր Չինաստանին, թե ինչ վտանգներով է հղի անհանդուրժողական այն քաղաքականությունը, որն Իրաքի հարցում ԱՄՆ-ի դեմ վարում էր ՉԺՀ-ն):*

Հյուս. Կովկասում երեխաների թունավորումը հիշեցնում էր Ռուսաստանին, որ նա ստիպված է գործել մի քանի ուղղությամբ եւ որ գործերը բարվոք չեն ոչ միայն ուկրաինական, այլ նաեւ կովկասյան ճակատում: Որպես հնուտ տեղեկատվական գործողություն պետք է հիշատակել նաեւ ՁԼՄ-ը հեղեղած այն հաղորդագրությունները, թե Ուկրաինան Ալ-Քաիդային միջուկային զենք է վաճառել: Բնորոշ է, որ այդ հիմք չունեցող լրատվությունը տրվել էր 2001թ.: Ներկայումս այն, առանց նշելու հաղորդագրման ժամանակը, կրկին շրջանառության մեջ է դրվել տեղեկատվական դաշտում, եւ այդպիսով տպավորություն է ստեղծվում, թե դեպքերը տեղի են ունեցել օրերս:

### ***Ռազմավարությունների տարբերություն***

Պետք է ընդունել, որ Յուլչենկոյի ճամբարը եւ նրա թիկունքին կանգնած ուժերը հետընտրական հնարավոր սցենարներին հիմնավորապես են նախապատրաստվել: Ընդդիմադիրների կազմակերպչական գրեթե բոլոր քայլերը նախապես մանրակրկիտ մշակված եւ հաշվարկված են: Նկատենք, որ այս ամենն ընթանում է այն պարագայում, երբ ռուսական քաղտեխնոլոգներն Ուկրաինայի ներքաղաքական դաշտում գործում են անթաքույց: Սակայն նրանց ուշացած քայլերը միայն զրգռում են ուկրաինական հանրությանը:

Ուկրաինայի հարցը ռազմավարական նշանակություն ունի Արեւմուտքի համար: Համաձայն որոշ արեւմտյան փորձագետների՝ ընտրություն-

ներն Ուկրաինայում ԱՄՆ-ի համար նույնքան կարելու են, որքան պատերազմը Իրաքում: Ջորջ Բուշն ուկրաինական ընտրություններում իր անձնական ներկայացուցիչ էր նշանակել Սենատի արտաքին հարցերի հանձնաժողովի ղեկավար, հանրապետական Ռիչարդ Լուգարին, որը հայտնի է իր կոշտ դիրքորոշումներով դեպի Ռուսաստանը: Համաձայն անվանի քաղաքագետ Վյաչեսլավ Նիկոնովի (նա մոտ է կանգնած Կրեմլին եւ ռուսաստանյան հատուկ կառույցներին) տվյալների՝ ԱՄՆ-ը միայն պաշտոնապես \$200 մլն է փոխանցել Յուլչենկոյի կողմնակիցներին: Կասկած չի հարուցում, որ Յուլչենկոն մոտավորապես նույնքան պաշտոնական գումարներ է ստացել նաեւ եվրոպական կառույցներից, քանի որ Ուկրաինայի հարցում ամերիկյան եւ եվրոպական շահերը համընկնում են: Ընդունված է համարել, որ նման իրադրություններում ոչ պաշտոնական ֆինանսական աջակցությունը նվազագույնը հավասար է պաշտոնականին: Կարելի է գնահատել, որ ընդհանուր առմամբ Արեւմուտքը ներդրել է ուկրաինական ընտրություններում մինչեւ \$1,0 մլրդ գումար: Ի տարբերություն Ռուսաստանի կողմից տրված գումարների, արեւմտյան միջոցներն ավանդաբար ուղղվում են ոչ թե ընդհանուր տնտեսական հարցեր լուծելուն, այլ անձնավորված տրվում են մարդկանց:

Հատուկ ուշադրություն է հատկացվում քաղաքական ընտրանուն հայտնի է, որ մեկ հեղինակավոր անձը կարող է ապահովել ոչ միայն ձեռնու քաղաքական որոշումներ, այլ նաեւ բազմաթիվ ընտրողների ձայներ: Առանձնահատուկ ուշադրության է արժանանում երիտասարդությունը, որն ամենուր ավելի դյուրին է տրվում օտար արժեքներին: Օրինակ՝ Ուկրաինայում ակտիվ գործունեություն են ծավալել ժամանակին ԱՄՆ-ի կողմից Սերբիայում ստեղծված «Օտպոր» կազմակերպության ակտիվիստները (որոնց միջոցով ստեղծվել էր նաեւ վրացական «Կմարա»-ն, բելառուսական «Ձուբր»-ը, ալբանական «Մյաֆտ»-ը): «Օտպոր»-ի ակտիվիստները կազմակերպել են նույն ֆունկցիաները կատարող ուկրաինական «Որո» կազմակերպությունը, որի դերակատարումն ընտրական գործընթացում խիստ մեծ է: Անհրաժեշտ է նաեւ նշել, որ եթե անցյալ ուկրաինական ընտրություններին Արեւմուտքից մասնակցում էին 600 դիտորդ, ապա այս անգամ արեւմտյան դիտորդների թիվը հասել է 3500-ի:

Հատկանշական է, որ Յուլչենկոյի վարչապետ լինելու տարիներին այդ երկրում տնտեսական աճ գրեթե չի գրանցվել: Իսկ նրա աջ թեւը եւ հեղափոխության իրական առաջնորդ Յուլյա Տիմոշենկոն քանիցս խուսափել է քրեական պատասխանատվությունից: Սակայն ներկայիս ընտրական տեխնոլոգիաներն այնպիսին են, որ ռազմավարական բնույթի հարցերը նահանջում են հետին պլան, եւ առաջնահերթ են դառնում

հուզականը, անհրականանալի խոստումները, շուռները եւ այլն: Եթե բուն Արեւմուտքում քաղտեխնոլոգները գործում են անհամեմատ նուրբ եւ պահպանում են կայունությունը, ապա հետխորհրդային տարածքներում նրանց հիմնական նպատակը, թերեւս, հենց անկայունություն ստեղծելն է:

Յանուկեւիչը, ըստ ամենայնի, հաջող կազմակերպիչ է: Նրա օրոք Ուկրաինայի տնտեսությունն առաջընթաց ապրեց: Բավական է նշել հետեւյալ թվերը. 2003թ. երկրի ՅԱ-ն աճել է 9,4%, իսկ 2004թ. հունվար – հոկտեմբեր ժամանակահատվածում՝ 12,7%: Սակայն Յանուկեւիչի կերպարը, որը երկու դատվածություն ունի, չի ընկալվում հանրության կողմից որպես երկրի նախագահ: Կամ ավելի ճիշտ կլինի ասել, որ տեխնոլոգները չեն կարողացել նրա կերպարին համապատասխան հմայք հաղորդել: Ավելին. ներկայումս նրա կերպարը նույնացվում է Դոնեցկի միլիարդատեր Ռինատ Ահմեդովի հետ, որը հանրության կողմից ընկալվում է որպես Յանուկեւիչի «շեֆ» եւ միաժամանակ հանցագործ թիզնեսի մարմնացում:

Պետք է ընդունել, որ Ուկրաինայի հարցում, անկախ հետագա զարգացումների արդյունքից, Ռուսաստանը կրեց խոշոր աշխարհաքաղաքական պարտություն, որի հետեւանքները դեռ շատ երկար իրենց զգալ են տալու: Այսօր բոլոր մեկնաբանները զուգահեռներ են տանում Ուկրաինայում, Վրաստանում եւ Աբխազիայում կատարվածների միջեւ:

Այս ամենի առիթով նկատենք, որ ժամանակակից Ռուսաստանը տակավին չունի իր ուրույն աշխարհաքաղաքական եւ քաղաքակրթական նախագիծը (ծրագիրը): Այսօրվա ԱՄՆ-ը այլ երկրներին եւ ժողովուրդներին տալիս է քիչ թե շատ կայուն քաղաքական երաշխիքներ եւ աշխարհի ռազմաքաղաքական առումով ամենահզոր տերության դաշնակից լինելու զգացումը: ԵՄ հիմնական խաղաքարտը սոցիալ-տնտեսական երաշխիքներն են եւ եվրոպական համընդհանուր բարօրության դաշտում գտնվելը: Մինչդեռ Ռուսաստանը դեռ չի ձեւավորել այն մոդելը, որը կարող է նրան հրապուրիչ դարձնել ժամանակակից աշխարհի քաղաքացու աչքերում: *(Ռուսաստանյան գաղափարախոսների մոտեցումները «ռուսական նախագծի» վերաբերյալ խիստ իրարամերժ են. վեճերն այդ ոլորտում ընթանում են արդեն շուրջ երկու հարյուրամյակ եւ շարունակվում են առայսօր: Ոմանք՝ այսպես կոչված «գապադնիկները», գտնում են, որ Ռուսաստանը քաղաքակրթորեն պետք է վերածվի Եվրոպայի մի մասի: Մյուսները՝ «պոչվեցնիկները», գտնում են, որ Ռուսաստանն իրենից ուրույն քաղաքակրթություն է ներկայացնում եւ նրա միաձուլվելը Արեւմուտքի հետ կխաթարի ազգի զարգացումը):*

### **Հնարավոր հետեւանքները Հայաստանում**

Աշխարհաքաղաքական առումով զարգացումներն Ուկրաինայում եւ որպէս դրանց հետեւանք՝ Ռուսաստան-Արեւմուտք հարաբերությունների սրացումը անմիջականորեն անդրադառնալու է նաեւ մեր տարածաշրջանի վրա: Մասնավորապէս՝ բավական վիճելի եւ դժվար իրագործելի է դառնում ՀՀ որոշ քաղաքագետների կողմից առաջադրված այն թեզը, թե ԼՂՀ հիմնահարցում հնարավոր է Ռուսաստան-ԱՄՆ շահերի լոկալ համընկնում: Նկատենք նաեւ, որ Դելիից հետո Պուտինը մեկնեց Թուրքիա, իսկ վերջինիս հարաբերությունները ԱՄՆ-ի հետ կարելի է անվանել լարված (*մասնավորապէս հաշվի առնելով վերջերս թուրքերի հնչեցրած այն մեղադրանքը, թե Իրաքի Էլ-Ֆալուջա քաղաքում ապստամբների դեմ ամերիկյան զորքերի գործողությունները կարելի է անվանել զենոցիդ*): Այսինքն՝ չի կարելի բացառել, որ ուկրաինական իրադարձություններից հետո Պուտինի՝ հուզականության հստակ երանգ կրող քաղաքականությունը կարող է հանգեցնել Թուրքիայի հետ հարաբերությունների լավացման, այդ թվում նաեւ ի հաշիվ «հայկական գործերի»:

Ուկրաինական ընտրությունները կարիք ունեն վերլուծության նաեւ ՀՀ-ում սպասվող ապագա ընտրությունների համատեքստում: Համաձայն որոշ ԶԼՍ հաղորդագրությունների՝ Ուկրաինայում «գործերն ավարտելուց» հետո ԱՄՆ-ը իր ունեցած քաղտեխնոլոգիական ռեսուրսները պետք է «նետի» Մոլդովայի, Կենտրոնական Ասիայի հանրապետությունների եւ ՀՀ-ի վրա: Անշուշտ, մեր հանրությունը կարողանում է ավելի սթափ գնահատել խնդիրները: Սակայն նոր պայմաններում ձեւավորվող սերնդի համար առաջին պլան են մղված հենց այն իռացիոնալ բնույթի գործոնները, որոնք այդքան կարեւոր դեր խաղացին Վրաստանում եւ Ուկրաինայում: Այս առումով՝ ՀՀ ապագա ընտրություններում իշխանության կողմից նախկինում կիրառված տեխնոլոգիաները կարող են եւ արդյունավետ չլինել:

Քաղաքական նոր եւ կոշտ տրամաբանությունը սկսում է գերիշխել աշխարհում, եւ ՀՀ-ն վաղ թե ուշ ընդհարվելու է այդ իրողության հետ: Պետք չէ այդ նոր իրողությունը դիմավորել սվիններով, եւ առավել եւս պետք չէ բարձրացնել ձեռքերն ու հանձնվել: Դրան պետք է նախապատրաստվել: Նկատենք, որ ցանկացած քաղաքական ակտիվություն վկայում է հանրության՝ էներգետիկ մի մակարդակից ավելի բարձրին անցնելու մասին, եւ պետք է կարողանալ այդ հավելյալ եռանդն օգտագործել ի շահ մեր ազգի եւ պետության:

**ԲԵԼԱՌՈՒՄ. ՋԱՐԳԱՑՄԱՆ ԵՐՐՈՐԴ ՈՒՂԻ  
Գագիկ Տերտերյան**

Այսօր ՀՀ տեղեկատվական դաշտում ամենատարբեր առիթներով գրված հոդվածներում հաճախ կարելի է հանդիպել հեզմական, քամահրական արտահայտություններ Բելառուսի եւ հատկապես այդ հանրապետության նախագահի՝ Լուկաշենկոյի հասցեին: Հաճախ նման մոտեցումը պայմանավորված է քաղաքական պատվերով: Սակայն երբեմն տպավորություն է ստեղծվում, որ լրագրողների եւ մեկնաբանների թյուր պատկերացումները Բելառուսի մասին պարզապես հետեւանք են այդ երկրի վերաբերյալ տեղեկատվության պակասի:

Այսօր Բելառուսը Արեւելյան Եվրոպայի զարգացած արդյունաբերական երկրներից է եւ աչքի է ընկնում բարձր իրավական ու սոցիալական ապահովվածության մակարդակով: Հետխորհրդային սլավոնական այս երկրի փոքր-ինչ ոչ սովորական այս իրավիճակը (եթե համեմատենք Ռուսաստանի կամ Ուկրաինայի հետ) հետեւանք է այն իրողության, որ բելառուսական ժողովուրդը եւ նրա այսօրվա ղեկավարությունն ընտրել են զարգացման ուղւյն ուղի: Թերեւս հենց այս հանգամանքն է, որ քարոզչական որոշ աղբյուրների թելադրում է այդ հանրապետությունը ենթարկել տեղեկատվական շրջափակման՝ զուգահեռաբար ձեւավորելով Բելառուսի բացասական կերպարը տեղեկատվական դաշտում:

Բելառուսն այն յուրօրինակ երկրներից է, որն ընտրել է զարգացման «երրորդ ուղւյն»՝ այսպես կոչված «ոչ սոցիալիզմ, ոչ կապիտալիզմ» տարբերակը: Նշենք, որ նախկինում զարգացման նման ճանապարհ ընտրել էր Իսպանիայի առաջնորդ Ֆրանկոն, իսկ ներկայումս այդ մոդելը փաստորեն գործում է նաեւ Իրանում: Այդ եղանակով Լուկաշենկոյին (որի իշխանության գալը որոշ քաղաքական վերլուծաբաններ կապում են ռուսական ռազմական հետախուզության՝ ԳՌՈՒ գործունեության հետ) իրոք հաջողվեց խուսափել հետխորհրդային շրջանին բնորոշ փլուզման գործընթացներից: Այնտեղ պահպանվել է գիտակրթական, արդյունաբերական եւ սոցիալական ապահովության ենթակառուցվածքների զգալի մասը: Ինքը՝ Լուկաշենկոն (*որն, ի դեպ, ինչպես ցույց են տալիս նրա ելույթների վերլուծությունները, բազմակողմանի զարգացած անձնավորություն է եւ ունի լայն գիտելիքներ տնտեսության, կառավարման, ինչպես նաեւ մշակույթի, դասական գրականության ու այլ ոլորտներում*), օգտվում է բնակչության մեծ մասի համակրանքից: Կարելի է համոզված լինել (դրա մասին են

վկայում բազմաթիվ, այդ թվում՝ ՀՀ-ից դիտորդների վկայությունները), որ վերջերս անցկացված հանրաքվեի արդյունքները նվազագույնը 90%-ով համապատասխանում են իրականությանը: Ինչպես գիտենք, այդ երկրում հանրաքվեի միջոցով կատարվեց սահմանադրական փոփոխություն, ինչը թույլ տվեց Լուկաշենկոյին երրորդ անգամ մասնակցել նախագահական ընտրություններին:

Բելառուսի տնտեսությունն այսօր բուռն զարգացում է ապրում, եւ այդ երկրի ՀՆԱ-ն 1996-2001թթ. միջին հաշվով ամեն տարի աճել է 6%, եւ այդ աճը ներկայումս շարունակվում է: Այդ երկիրն առաջինն էր ԱՊՀ երկրներից, որի ՀՆԱ ծավալը 2002թ. հասավ 1991թ. մակարդակին: Այս ամենն այն դեպքում, երբ Բելառուսը չի օգտվում միջազգային ֆինանսական կազմակերպությունների ծառայություններից: Նման առաջընթացը մեծապես պայմանավորված է նրանով, որ Բելառուսում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում գիտակրթական համակարգին եւ նրա զարգացմանը:

Բավական է նշել, որ ՄԱԿ Ջարգացման ծրագրի «Նոր տեխնոլոգիաների օգտագործումը հանուն մարդու զարգացման» 2001թ. զեկույցի համաձայն՝ 1 մլն մարդու հաշվարկով տրված պատենտների թվով Բելառուսը զբաղեցնում է աշխարհում 28-րդ տեղը՝ իրենից հետ թողնելով գործնականում Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի բոլոր պետություններին եւ այնպիսի զարգացած պետությունների, ինչպիսիք են Կանադան, Իտալիան եւ Իսպանիան: Բարձր եւ միջին տեխնոլոգիաների արտահանման ցուցանիշով Բելառուսը զբաղեցնում է աշխարհում 27-րդ տեղը՝ առաջ անցնելով Նորվեգիայից, Ավստրալիայից, Նոր Զելանդիայից, Հունաստանից եւ Պորտուգալիայից:

Այդ հանրապետությունում 10.000 բնակչից 816-ը օգտվում են Ինտերնետից (վերջին 3 տարիներին օգտվողների ընդհանուր թիվն աճել է ավելի քան 15 անգամ): Նշենք, որ այդ ցուցանիշը Ռուսաստանում կազմում է 409, Ուկրաինայում՝ 119, իսկ Ղազախստանում՝ ընդամենը 93 մարդ: Հատկանշական է նաեւ, որ Բելառուսում 100 ընտանիքին բաժին է ընկնում 80 հեռախոսահամար, մինչդեռ Ռուսաստանում եւ Ուկրաինայում այդ ցուցանիշը հավասար է 53-ի:

ՄԱԿ Ջարգացման ծրագրի «Մարդու զարգացման» 2003թ. զեկույցի համաձայն՝ Բելառուսի վարկանիշը մարդու զարգացման չափանիշով առաջընթաց է ապրել եւ ներկայումս աշխարհում 53-րդն է (175 երկրի հաշվարկով): Հարկ է նշել, որ այդ չափանիշով Բելառուսը գրավում է առաջին տեղը ԱՊՀ երկրներում եւ առաջ է անցել եվրոպական մի շարք երկրներից: Դա պայմանավորված է առաջին հերթին նրանով, որ Բելառուսը ծախսում է կրթության վրա իր ՀՆԱ 6%-ը, իսկ առողջապահության

վրա՝ 4,7%-ը (համեմատության համար նշենք, որ Ռուսաստանն այդ կարիքների համար ծախսում է համապատասխանաբար 4,4% եւ 3,8%, իսկ Ուկրաինան՝ 4,4% եւ 2,9%): Վերոհիշյալ չափանիշով՝ առողջապահության վրա կատարած իր ծախսերով Բելառուսը գերազանցում է Լեհաստանին, Լատվիային, Լիտվային, իսկ հանրային կրթության վրա ծախսերի չափանիշով՝ անգամ ԱՄՆ-ին, Ճապոնիային, Չեխիային եւ այլն: ՄԱԿ վերոհիշյալ զեկույցի համաձայն՝ հանցագործությունների թիվը Մինսկում շատ ցածր է, եւ նրան զիջում են եվրոպական այնպիսի «բարվոք» մայրաքաղաքներ, ինչպիսին են Բուդապեշտը, Պրահան եւ այլն: Այս ամենի համատեքստում հարկ է նշել, որ կոռուպցիայի ցուցանիշը Բելառուսում ԱՊՀ երկրների մեջ ամենացածրն է:

Բավական մարտունակ է Բելառուսի բանակը, որի կազմակերպման ձեւը ինչ-որ չափով հիշեցնում է իսրայելականը: Օրինակ՝ զորամասերում ծառայում են հիմնականում տվյալ զորամասի տեղակայման շրջանում բնակվող զինակոչիկները: Դա հեշտացնում է մոբիլիզացիոն խնդիրների լուծումը եւ թույլ է տալիս զինվորներին հաճախակի այցելել տուն, ինչն, իր հերթին, բարելավում է բանակի հոգեբանական վիճակը:

Հարկ է շեշտել, որ Լուկաշենկոյի կողմից վարվող քաղաքականության շնորհիվ Բելառուսի անկախության աստիճանը բավական բարձր է, եւ օտարերկրյա քաղաքական եւ տնտեսական ազդեցությունները հասցվել են նվազագույնի: Այդ խնդրում մեծ դերակատարում ունի արդյունավետ աշխատող բելառուսական ԿԳԲ-ն, որն, ի դեպ, միակն է ԱՊՀ-ում, որ պահպանել է իր նախկին անվանումը: Այդ հատուկ ծառայությանը հաջողվել է հիմնականում վնասազերծել վարչակարգի դեմ գործող եվրոպական եւ ամերիկյան կառույցները (այս կապակցությամբ շեշտենք, որ այդ հանրապետությունը, թերեւս, միակ տարածքն է, ուր ԱՄՆ-ը եւ ԵՄ-ը գործում են վերին աստիճանի համերաշխ): Հատկանշական է, որ Մինսկում ժամանակին հրապարակվեց արեւմտյան դեսպանների խորհրդակցության գաղտնալսումը, որտեղ խոսվում էր Լուկաշենկոյին հակաօրինական ճանապարհով տապալելու ծրագրերի մասին: Հանրապետությունից արտաքսվել են նաեւ բազմաթիվ պաշտոնյաներ ԵԱՀԿ եւ այլ պաշտոնական արեւմտյան կազմակերպություններից: Բավական է նշել, որ 2002 թվականին Մինսկում ստեղծվել էր մի յուրահատուկ իրավիճակ, երբ այնտեղ չկար գեթ մեկ դիտորդ ԵԱՀԿ-ից, քանի որ նրանց հաջորդաբար մեղադրել էին լրտեսության մեջ եւ հեռացրել երկրից (*հետաքրքրական է, որ հետխորհրդային շրջանում առաջին անգամ հենց Մինսկում են ձերբակալվել նաեւ թուրքական լրտեսները*): Թերեւս դա է պատճառը, որ ներկայիս խունվեյքինական ոճով ստեղծված սերբական «ОТНОС»-ի, վրացական «Կմարա»-ի եւ ուկրաինական «Пора»-ի անալոզը Բելառուսում՝ «Зыб»-ը,

գրեթե զրկված է լուրջ քաղաքական հեռանկարից: Այսօր բելառուսական հատուկ ծառայություններն ակտիվ կանխարգելիչ եւ նախահարձակ գործողություններ են վարում Լեհաստանում եւ Չեխիայում, որտեղից ընդդիմությունը ստանում է ֆինանսական, կազմակերպչական եւ գաղափարական աջակցություն:

Նկատենք, որ ԱՄՆ Կոնգրեսը հատուկ որոշումներ է ընդունել Լուկաշենկոյի վարչակարգի դեմ, եւ այսօր ԱՄՆ-ը պաշտոնապես ֆինանսավորում է նրա դեմ ուղղված գործողությունները: Նման իրավիճակում նախագահ Բուշի վերջերս հայտարարած պատժամիջոցները (որոնց ցանկը դեռ պետք է որոշվի եւ հաստատվի Կոնգրեսի կողմից) դժվար թե վճռորոշ ազդեցություն ունենան դեպի Ռուսաստան եւ Եվրոպա կողմնորոշված բելառուսական տնտեսության վրա: Ի դեպ, հետաքրքրական է, որ վերջերս Բելառուսի ԱԳՆ-ն հայտարարեց, թե ԱՄՆ նախագահական ընտրությունները չեն համապատասխանում ժողովրդավարական չափանիշներին: Նման հայտարարություններ ԱՄՆ նկատմամբ իրեն թույլ էր տալիս միայն Չինաստանը:

Չարկ է նաեւ նշել, որ չնայած Ռուսաստանի հետ ունեցած սերտ ռազմական եւ տնտեսական համագործակցությանը, Լուկաշենկոն թույլ է տալիս իրեն շատ հարցերում համամիտ չլինել Կրեմլի հետ: Մոսկվան, իր հերթին, դեռ չի կարողացել Բելառուսում Լուկաշենկոյին իր ազդեցության տակ գտնվող քաղաքական այլընտրանք ստեղծել: Մի տարբերակով այդ դերը պետք է ստանձնեն Բելառուսի խորհրդային շրջանի ղեկավար եւ նախկինում մեծ ժողովրդականություն վայելող Մաշերովի աղջիկը, սակայն այդ պլանները փաստորեն ձախողվեցին: Այնպես որ, եթե այսօր Բելառուսը էներգետիկայի ոլորտում տնտեսապես կախված է Ռուսաստանից, ապա վերջինս իր հերթին կարիք ունի բելառուսական տարանցիկ ճանապարհների, գյուղատնտեսական տեխնիկայի եւ արտադրանքի (ի դեպ, Բելառուսը ռուսական բանակի պարենի հիմնական մատակարարն է): Տեղին է նաեւ նշել, որ Լուկաշենկոն օգտվում է ռուսական դերժավնիկների համակրանքից, որոնք իրենց հերթին պաշտպանում են նրա շահերը ռուսական քաղաքական դաշտում:

Ամփոփելով այս համառոտ ակնարկը՝ կարելի է փաստել, որ հանձին Բելառուսի մենք գործ ունենք մի պետության հետ, որից կարելի է եւ փոխառնել խելամիտ մոտեցումներ: Անշուշտ, Ուկրաինայի դեպքերը եւ հետագա զարգացումները կունենան իրենց ազդեցությունը նաեւ Բելառուսի վրա, սակայն այս երկրի պետական եւ գաղափարախոսական համակարգը, թերեւս, ի գորու է նետված մարտահրավերներին համարժեք արձագանքելու:



**ՎՐԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՊԱՅԱՆՁՆԵՐԸ  
ԱՂՐԲԵՋԱՆԻՆ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՅԻՆ  
Կարեն Վերանյան**

Վերջին ժամանակներս վրացական մամուլում, հատկապես իշխանա-մետ «Georgian Times» թերթում, հաճախ են հնչում թուրքիայի ու Ադրբեյջանի վրացական համայնքներին մշակութային ինքնավարություն ընձեռելու կոչեր, որոնք գերազանցապես ուղեկցվում են վերոնշյալ երկրների նկատմամբ տարածքային պահանջներով:

Ադրբեյջանում վրացիները բնակվում են հիմնականում Բալակենի (Բելոկան), Գախիի (վրացերեն՝ Կախի) եւ Ջազաթալայի շրջաններում (վրացիները շրջաններին տալիս են ընդհանուր «Սաինգիլո» անվանումը): Ըստ վրացական աղբյուրների, Ադրբեյջանի Գախի շրջանը Վրաստանից անջատվել է 1604թ., երբ շրջանի իշխանը («մոռուրավ») դավաճանում է իր թագավորին, անցնում Շահ Աբասի կողմը, ընդունում իսլամ եւ դառնում Կախիի սուլթան: Այսօր ադրբեյջանաբնակ վրացիների (ինգիլոների) մեծ մասը իսլամադավան է:

2003թ. հուլիսին էլեկտրոնային կայքէջում Ջվիադ Ռուաձեի հեղինակությամբ լույս տեսավ ադրբեյջանաբնակ վրացիներին նվիրված մի հոդված, որտեղ մասնավորապես ասվում էր. *«Պետք է նշել, որ ներկայումս Սաինգիլոյում գործող դպրոցներում արգելվում է Վրաստանի պատմության ուսուցումը... Ուշագրավ է, որ Բելոկանի և Ջազաթալայի տեղական իշխանություններն անբողջովին ոչնչացրել են Վրաստանից ուղարկված 4 տոննա դասագրքերը»:*

Ս. թ. հոկտեմբերի վերջին «Georgian Times» թերթում հրապարակվեց մի հոդված՝ նվիրված Ադրբեյջանում բնակվող վրացիներին: Վրացի հեղինակի վկայությամբ, Սաինգիլոյում գործում են 7 վրացական եւ 1 ազգամիջյան դպրոց, որտեղ գնալով նվազում է աշակերտների թիվը: Այդ պատճառով տեղի ուսուցիչները հարկադրված են միակցել 1-3-րդ դասարանները, և արդեն 7-8 տարի է, ինչ չեն դասավանդվում Վրաստանի պատմություն եւ աշխարհագրություն առարկաները: Ըստ հեղինակի, *«ադրբեյջանցիները չեն ցանկանում, որ վրացի երեխաներն իմանան անցյալում այս հողերի՝ Վրաստանին պատկանելու մասին...»:*

Նույն «Georgian Times» թերթի 2003թ. 4, 14, 19 համարներում հրապարակվեց ազգությամբ վրացի Նաթո Գիրգաձեի հոդվածը, որտեղ

ըստ էության տարածքային պահանջներ են ներկայացվում Ադրբեջանին: Հեղինակի խոսքերով, «Վրաստանի հյուսիս-արևելքում 20-րդ դարում Ադրբեջանը զավթել է շուրջ 3564 քառ. կմ տարածք, որը կոչվում է Սահնգիլո»:

Կրկին «Georgian Times» թերթում ս. թ. նոյեմբերի սկզբին Գիա Խելեի հեղինակությամբ լույս տեսավ «Սահնգիլոյի հարցը եւ բարեկամությունը» խորագիրը կրող հոդվածը: Հեղինակի խոսքերով, 1921թ. նոյեմբերի 15-ին Ջազաթալայի շրջանը Վրաստանից անցել է Ադրբեջանին, որովհետեւ 1921թ. հուլիսի 5-ին Վրացական ու Ադրբեջանական ԽՍ հանրապետությունների համատեղ նիստում վրաց բուլշեիկներին ստիպել են ընդունել, որ Վրացական ԽՍՀ-ն հրաժարվի Ջազաթալայի շրջանի նկատմամբ հավակնություններից: Այնուհետեւ հեղինակը հավելում է. «Սակայն բոլորին հայտնի է նաեւ այն, որ միացյալ Վրաստանի կազմում ընդգրկվում էր Կախեթի հյուսիսարեւելյան մասը, որն այսօր գտնվում է Սահնգիլոյի տարածքում: Իսկ ի՞նչն է ստիպել Ադրբեջանի ղեկավարներին գրավել օտար հողերը»: Հոդվածում նշվում է նաեւ, որ «Սահնգիլոյի» վրացիները ենթարկվում են ճնշումների, չունեն ազգային դպրոցներ, արգելվում է կրել վրացական ազգանուններ, դավանել քրիստոնեություն:

\* \* \*

Վրացական «Ազե» հեռուստաընկերության հաղորդման համաձայն՝ ներկայումս Թուրքիայում բնակվում է այնքան վրացի, որքան Վրաստանում: Իսկ 2002թ. հունվարին անցկացված մարդահամարն արձանագրել է, որ Վրաստանում բնակվում է 3 մլն 661.173 հազ. վրացի:

«Georgian Times» թերթում Նաթո Գիորգաձեի 2003թ. վերոհիշյալ հոդվածում տարածքային պահանջներ էին ներկայացվում նաեւ Թուրքիային: Հեղինակը մասնավորապես նշում էր. «Թուրքիան 1921թ. բռնազավթել է Վրաստանը և գրավել հետևյալ պատմական վրացական տարածքները՝ Արտահանին, Շավշեթին, Չրդիլին, Կլարջեթին, Տաոին, Տորտոմին, Պարխալին, Սպերի Լազեթին... Պատմական դժբախտությունները խանգարեցին Վրաստանին միավորել այն տարածքները, որտեղ դեռևս հնագույն ժամանակներից բնակվում էին վրացական ցեղերը, ավելի ստույգ՝ Կուխիդի ու Լազիկի պատմական տարածքները»:

Իշխանամետ «Սաքարթվելոս Ռեսպուբլիկա» թերթում ս.թ. ապրիլի 2-ին տպագրված «Վրաստանի սահմանները եւ այսօրվա իրականությունը» վերնագրով հոդվածում պրոֆեսոր Բեդրո Գոիշվիլին նույնպես տարածքային պահանջների խնդիրն է առաջ քաշում. այս անգամ խոսքը վերաբերում է ոչ միայն Ադրբեջանին ու Թուրքիային, այլև

Ռուսաստանին և Հայաստանին: Ըստ հեղինակի, Վրաստանը ժամանակի ընթացքում կորցրել է իր հողերի մեծ մասը՝ Թուրքիայի 15,622 քառ. կմ տարածքը (Լազստան՝ 3,925 քառ. կմ, Արդվին՝ 5,724, Օլթիսի՝ 3,040, Արդահան՝ 5,724), Հայաստանի 2,478 քառ. կմ տարածքը (Լոռի, Փամբակ, Շամշադին), Ադրբեջանից՝ 3,667 քառ. կմ տարածք, իսկ Ռուսաստանը, ըստ հեղինակի վկայության, Վրաստանից գրավել է Դվալեթին, Դարիալի կիրճը:

Բ. Գոիշվիլու հոդվածն արձագանք գտավ «Georgian Times» թերթի 2004թ. ապրիլի 8-ի համարում, որտեղ ներկայացված էր Ալեքսանդր Մանվելաշվիլու՝ «Վրաստանի սահմանները» գրքից մի հատված, ուր կրկին առաջադրվում են «վրացական տարածքային» պահանջները: Մասնավորապես նշվում է, որ հարավում Վրաստանի սահմանը պետք է անցնի Փամբակի ու Բեզորդալա լեռների միջով (Լոռին մնում է Վրաստանի կազմի մեջ)՝ Վրաստանին թողնելով Չըլդր լիճը եւ հատելով Արաքսն ու Կուրը բաժանող լեռը: Այնուհետեւ սահմանը, ըստ հեղինակի, շրջանցում է Տորտունը, անցնում էրզրումի մոտով՝ Մամախաթունի միջով, ներառում Բայբուրթը, անցնում Գյումուշխանեի մոտով՝ հասնելով մինչեւ Սեւ ծով: Հոդվածն ավարտվում է հետեւյալ նախադասությամբ. *«Այս սահմանները պետք է ամրագրվեն բոլոր վրացիների հոգիներում եւ դառնան երազ: Իսկ երազը ենթադրում է նպատակ»:*

Վրացական «Կրիմինալի» շաբաթաթերթը ապրիլի 22-ի համարում ուշադրություն է հրավիրում վրաց-թուրքական սահմանի մի քանի հատվածների վրա՝ մասնավորեցնելով, որ *«դրանք այն տարածքներն են, որոնք չեզոք գոտիներ են... Մենք պատրանքներ չունենք, որ երբեւէ կվերադարձնենք մեր պատմական սահմանները»:*

«Georgian Times» թերթի 2004թ. հոկտեմբերի 21-ի համարում լույս տեսած հոդվածի հեղինակ Գիա Խելեյին, որը բավականին ակտիվ «զբաղվում» է պաշտոնական Բաքվի նկատմամբ տարածքային պահանջների առաջադրման հարցով, ԵՄ Թուրքիայի հավանական անդամակցության հարցում, որպես ազդեցության լծակ, փորձում է առաջ քաշել պաշտոնական Անկարայի՝ Թուրքիայում բնակվող վրացական համայնքի նկատմամբ «ոչ ժողովրդավարական» մոտեցումը: *«Լազիմեսխեթյան ինքնավարություն Թուրքիայում (Եվրամիության փոխարեն)»* խորագիրը կրող հոդվածում հեղինակը մասնավորապես նշում է. *«Քանի որ Թուրքիան շատ է ցանկանում մտնել ԵՄ, մենք կարծում ենք, որ ժամանակն է Թուրքիայի վրացիներին ընձեռել մշակութային ինքնավարություն (բացել դպրոցներ ու քոլեջներ վրացերենով, թատրոն, ռադիո, հեռուստատեսություն եւ այլն, եւ այս ամենը պետք է ֆինանսավորի Թուրքիայի կառավարությունը)»*, եւ որ *«Թուրքիայի վրացիները*

բնակվում են իրենց իսկ հողում, նրանք տեղի բնիկներն են (չնայած նրան, որ շատերին արտաքսել են վրացական հողերից): Այս հարցը քարոզելու նպատակով Վրաստանին հարկավոր է եվրոպայում գտնել որեւէ երկիր, եւ մենք կարծում ենք, որ կգա ժամանակ, եւ Թուրքիայի ղեկավարությունը ընթրնունով կգբաղվի այդ խնդրով»: Ըստ հեղինակի՝ «վրացական (լազի-մեսխեթյան) ինքնավարությունը» պետք է ստեղծվի «վրացական պատմական տարածքների վրա»՝ Արդվինի, Ռիզեի, Տրապիզոնի, Գյումուշխանեի եւ Օրդուի նահանգներում, ինչպես նաեւ Կարսի նահանգի արեւմտյան հատվածում (ներառյալ Կարս քաղաքը), Էրզրումի նահանգի հյուսիսային մասում (Էրզրում քաղաքով հանդերձ), Ազրինի նահանգի հյուսիսարեւելյան հատվածում եւ Ալաշկերտի շրջանում:

## ԻՍԼԱՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ

### Սարգիս Հարությունյան

ա. Ըստ վիճակագրական տվյալների, Ադրբեջանի մոտ 7 միլիոնանոց բնակչության շուրջ 65%-ը դավանում է իսլամի շիա ճյուղը, 30%-ը պատկանում է սուննի ուղղվածությանը (Հանաֆի դպրոց): Ադրբեջանում բնակվող լեզգիները, թաթարները, քրդերի մի մասը եւ մեսխեթցի թուրքերը սուննի են, իսկ ադրբեջանցիների մեծ մասը, թալիշները, թաթերն ու քրդերի առավել մեծ հատվածը՝ շիա: Վերջիններս հիմնականում կենտրոնացած են երկրի արեւելյան ու հարավային մասերում, Ապշերոնյան թերակղզում (Բաքու եւ շրջակայքը): Սուննիների գերակշիռ մասը բնակվում է Ադրբեջանի հյուսիսային (որը կից է սուննի Դաղստանին ու Չեչնիային) եւ արեւմտյան հատվածներում:

Ցարական Ռուսաստանի վիճակագրական տվյալների համաձայն՝ 1830թ. ներկայիս Ադրբեջանի տարածքում բնակվող մահմեդականները գրեթե հավասարաչափ բաժանված էին շիաների եւ սուննիների՝ վերջիններիս թվական մի փոքր առավելությամբ: Հյուսիսային Կովկասում Շամիլի բարձրացրած երկարատեւ ապստամբությանը սուննիների օժանդակությունը, Օսմանյան կայսրության հետ նրանց կապվածությունը կանխորոշեցին ռուսական քաղաքականությունը սուննիների նկատմամբ. նրանք սկսեցին գաղթել Թուրքիա: Փոխարենը որպես հակակշիռ ուժ ռուսական քաղաքականությունը սկսեց օգտագործել շիաներին: Օրինակ՝ 1830-1837թթ. ընկած ժամանակահատվածում ռուսական զորքերին օժանդակություն էին ցուցաբերում շիաների զինված ջոկատները: Եվ արդեն 1860-ական թթ. տվյալների համաձայն՝ Հարավային Կովկասում մահմեդականների 2/3-րդը շիա էր: Փաստորեն, այդ վիճակը պահպանվել է մինչ օրս:

Խորհրդային շրջանում իսլամը, բնականաբար, ենթարկվեց ճնշման: Օրինակ՝ 1928թ. Ադրբեջանում գործում էին մոտ 1 400 մզկիթներ, իսկ արդեն 5 տարի անց նրանց թիվը կազմում էր ընդամենը 17: 1976թ. տվյալների համաձայն՝ Ադրբեջանական ԽՍՀ-ում կային 16 գրանցված մզկիթներ եւ մեկ մեդրեսե (իսլամական դպրոց): Սակայն նույն այդ ժամանակ, ըստ ոչ պաշտոնական տվյալների, հարեւան հանրապետությունում գործում էին գաղտնի մոտ հազար աղոթավայրեր եւ շուրջ 300 ուխտատեղիներ: Խորհրդային Միության գոյության վերջին տարիներին՝ 1980-ական թթ. երկրորդ կեսին, Ադրբեջանում հոգեւոր ծառայություն էին անցկացնում մոտ 100 մուլլաներ, որոնցից միայն 16-ն էին աստվածաբանական

կրթություն ստացել Տաշքենդի Իսլամական համալսարանում կամ Բուխարայում գտնվող Միր Արաբ մեդրեսեում: Այդ նույն տարիներին մզկիթների թիվը կրկին աճեց՝ հասնելով մոտ 200-ի, չնայած պաշտոնապես գրանցված էին շիաների 11 մզկիթ, սուննիների 2 մզկիթ եւ եւս 4 մզկիթ, որտեղ երկու ուղղությունների ներկայացուցիչներն էլ աղոթք էին անում: Ներկայումս, ոչ պաշտոնական տվյալների համաձայն, Ադրբեջանում գոյություն ունեն շուրջ 2 100 մզկիթ, մադրասա եւ մեկ իսլամական համալսարան:

Հոգեւոր կյանքը պաշտոնապես գտնվում է «Կովկասյան մահմեդականների վարչակազմ» (ԿՄՎ) կոչվող կառույցի ներքո: Այն գլխավորում է շիա շեյխուլիսլամ Ջաջի Ալլահշյուբուր Փաշազադեն, որն ունի սուննի մեկ տեղակալ՝ մուֆթի Ջաջի Ալասքյար Մուսաեւը (կառույցն իր գոյատեւման ողջ ընթացքում ունեցել է շիա ղեկավար՝ սուննի տեղակալով): Թղթի վրա ԿՄՎ-ն համարվում է ԱՊՀ ողջ շիաների եւ Կովկասի ողջ սուննիների գլխավոր հոգեւոր կառույցը, սակայն իրականում այն Ադրբեջանից զատ ազդեցություն ունի Վրաստանի մահմեդականների՝ շիա ադրբեջանցիների եւ սուննի աջարների ու Դաղստանում բնակվող շիա ադրբեջանցիների վրա: 1999թ. տվյալների համաձայն՝ Ադրբեջանում ԿՄՎ ուղղակի ենթակայության ներքո էին գտնվում մոտ 1 000 մզկիթներ, այսինքն՝ առկա մզկիթների մոտավորապես կեսը: Ալլահշյուբուր Փաշազադեն նաեւ 1993թ. ստեղծված «Կովկասյան ժողովուրդների հոգեւոր բարձրագույն խորհրդի» նախագահն է: Այն բաղկացած է իսլամական եւ քրիստոնեական մի շարք կառույցների ներկայացուցիչներից:

1996թ. պաշտոնական տվյալներով՝ մոտավորապես 150 ադրբեջանցի ուսանողներ աստվածաբանություն էին ուսանում Եգիպտոսի, Իրանի, Լիբիայի, Սիրիայի, Թուրքիայի, Իրաքի, Սաուդյան Արաբիայի եւ Պակիստանի հոգեւոր հաստատություններում: Այստեղ հարկ է առանձնացնել 1992թ. Սաուդյան Արաբիայի ֆինանսավորմամբ Բաքվում բացված Իսլամական համալսարանը, որի ուսանողների թիվը ներկայումս հասնում է մինչեւ 220-ի: Համալսարանի ռեկտորն է շեյխուլիսլամ Փաշազադեի նախկին տեղակալ Ջաջի Սաբիրը, որի հարաբերությունները Փաշազադեի հետ բավականին լարված են:

բ. 1980-ական թթ. վերջին–1990-ական թթ. սկզբին Ադրբեջանի քաղաքական դաշտում ի հայտ եկան առաջին իսլամական կուսակցությունները, որոնցից կարելի է առանձնացնել երեք ամենախոշորները՝ «Ադրբեջանի առաջադիմական իսլամական կուսակցությունը», «Թովբե» (զղջում) կուսակցությունը եւ «Ադրբեջանի իսլամական կուսակցությունը»: Ի տարբերություն առաջին երկուսի, միայն «Ադրբեջանի իսլամական կուսակցությունն» (ԱԻԿ) է, որ մինչ օրս շարունակում է գործել:

Ըստ հրապարակված տեղեկությունների, ԱԻԿ-ը, ըստ էության, իրանական նախագիծ էր: Արեւմտյան աղբյուրների համաձայն՝ 1980-ական թթ. վերջերին – 1990-ական թթ. սկզբներին Իրանը Բաքվի, Լենքորանի շրջաններում ու Նախիջեւանում (այսպէս կոչված՝ «Կանաչ գոտի») իսլամական քարոզչության նպատակներով տարեկան ծախսում էր միջինը \$1 մլն: Քաղաքական դաշտում այդ ջանքերը «նյութականացան» ԱԻԿ ստեղծման աջակցությամբ: Կուսակցությունը ստեղծվեց 1991թ. Բաքվից 20կմ հարավ-արեւմուտք գտնվող Նարդարան բնակավայրում (ուճի մոտ 8 000 բնակիչ), պաշտոնապէս գրանցվեց 1992թ.: Ստեղծման պահից մինչեւ սույն թվականի սեպտեմբերի 17-ը կուսակցության վարչությունը գլխավորում էր Ալիքրամ Ալիեւը, որին այնուհետեւ փոխարինեց Յաշիադա Նուրիեւը: Նույն սեպտեմբերյան նիստի ժամանակ գործառնական փոփոխություններ մտցվեցին նաեւ կուսակցության ղեկավարման մեխանիզմում՝ կուսակցության վարչության լիազորությունների սահմանափակման միջոցով ընդլայնվեցին նախագահի իրավունքները:

1994թ. վերջին կուսակցությունը բաժանմունքներ ուներ Ադրբեջանի մոտ 70 բնակավայրերում, անդամների թիվը հասնում էր շուրջ 50 հազարի, սակայն 1996թ. սկսած ճնշումների արդյունքում կուսակցության անդամների թիվը ներկայումս խիստ սահմանափակվել է: Փաստորեն, կուսակցության ղեկավարությունն էր, որ գլխավորում էր 2002թ. հունիսի 3-ին Նարդարանում բռնկված հակաիշխանական զինված ակցիան:

գ. Ադրբեջանում իսլամական շարժման իրական ազդեցության պարզաբանման տեսանկյունից խիստ կարեւոր են առաջիկայում՝ դեկտեմբերի 17-ին այդ երկրում կայանալիք տեղական ինքակառավարման մարմինների ընտրությունները: Ակնկալվում է, որ Լենքորանում, Բաքվին մերձակա մի քանի բնակավայրերում (առաջին հերթին՝ Նարդարանում), Շամախի շրջանում արդար ընտրությունների դեպքում իսլամիստները կարող են ձեռք բերել բավականին լուրջ հաջողություններ:

Ադրբեջանական հասարակության ներսում ընթացող իսլամական շարժերի վրա ունեցած ազդեցությամբ հարկ է առանձնացնել իրանական, սաուդյան գործոնները եւ այն ներքաղաքական իրավիճակը, որը ստեղծվել է 2003թ. հոկտեմբերի 15-ի նախագահական ընտրություններից հետո:

Սաուդյան եւ իրանական գործոնների առումով, ըստ էության, ոչ մի նոր բան տեղի չի ունենում. շարունակվում է այդ երկրներից ընթացող ֆինանսաքարոզչական աշխատանքը: Օրինակ՝ ըստ տարբեր հաշվարկների, Ադրբեջանում ներկայումս առկա մզկիթներից շուրջ 350-ը գտնվում են վահաբականների վերահսկողության ներքո, իսկ մոտ 200 մզկիթ

կառուցվել է իրանական դրամական աջակցությամբ: Ի դեպ, այդ երկրները հատուկ ուշադրություն են դարձնում ադրբեջանական փախստականների ճամբարներում ծավալվող աշխատանքներին: Բացի այդ, իրանական կողմը զգալի աշխատանքներ է տանում Իրանին սահմանակից Ադրբեջանի թալիշաբնակ շրջաններում (ուր Բաքվի վերահսկողությունը թույլ է) իսլամական կրոնական միավորների ստեղծման ուղղությամբ:

Ընդդիմադիր (գերազանցապես ազգայնական) կուսակցությունների պարտությունը եւ մյուս կողմից՝ իշխանությունների վարած քաղաքականությունը ստեղծում են բավականին նպաստավոր միջավայր՝ Ադրբեջանում երրորդ ուժի ի հայտ գալու համար: Ի տարբերություն քրիստոնեական երկրների, ուր երրորդ ուժի ի հայտ գալու խնդիրը բավականին բարդ է, մահմեդական երկրներում առաջացած վակուումը կամ կիսավակուումային վիճակը սովորաբար լրացնում են իսլամիստական քաղաքական ուժերը, եւ այդ առումով Ադրբեջանը կարող է բացառություն չլինել:



## **ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱՑՄԱՆ ԱՄԵՐԻԿԱՆ ԿԱՂԱՊԱՐԸ ԻՆՆ ԹՐԵՅՆՈՐ**

Անկախ նրանից, թե ինչ վախճան կունենա վտանգավոր դիմակայությունը Կիեւում, ուկրաինական «Тора» («Ժամն է») երիտասարդական շարժման ժողովրդավար պարտիզաններն արդեն հասել են կարեւոր հաղթանակի: Երիտասարդ ժողովրդավար-ակտիվիստները մոբիլիզացրել են սովորաբար քաղաքականապես պասիվ ուկրաինացիներին, եւ նա այլեւս նախկինը չի լինելու:

Թեպետ ուկրաինացիներն է ստանալու «նարնջագույն հեղափոխության» նվաճումները, սակայն այս կամպանիան ամերիկացիների ստեղծագործությունն է՝ արեւմտյան բրենդի առաջխաղացման նրբորեն իրականացված մի ծրագիր, որը 4 տարվա ընթացքում կիրառվել է 4 երկրներում՝ անհրապույր վարչակարգերը տապալելու համար:

Ամերիկյան կառավարության կազմակերպած ու հովանավորած նմանատիպ կամպանիան՝ ամերիկացի խորհրդատուների, սոցիոլոգների, դիվանագետների, ամերիկյան առաջատար կուսակցությունների եւ ոչ կառավարական կազմակերպությունների ներգրավմամբ, առաջին անգամ կիրառվեց 2000թ. Բելգրադում՝ Սլոբոդան Միլոշեւիչի պարտությունն ընտրություններում ապահովելու համար: Այդ ժամանակ առանցքային դերը բաժին ընկավ Բելգրադում ԱՄՆ դեսպան Ռիչարդ Մայլզին: Նախորդ տարի, լինելով դեսպան Թբիլիսիում, նա Վրաստանում կրկնեց նույն հնարքը՝ սովորեցնելով Միխայիլ Սահակաշվիլուն՝ ինչպես տապալել Էդուարդ Շեւարդնաձեի: Բելգրադում հաջողության հասնելուց 10 ամիս անց Մինսկում ԱՄՆ դեսպան, Կենտրոնական Ամերիկայում (հատկապես՝ Նիկարագուայում) նման գործողությունների վետերան Մայքլ Կոզակը կազմակերպեց գրեթե նույնատիպ արշավանք՝ բելառուսական դիկտատոր Ալեքսանդր Լուկաշենկոյին ջախջախելու համար: Այդ փորձը ձախողվեց: «Բելառուսում Կոշտունիցա չի լինելու», - հայտարարեց այդ երկրի նախագահը՝ ակնարկելով Բելգրադի դեպքերը:

Սերբիայում, Վրաստանում ու Բելառուսում կուտակված փորձն անգնահատելի եղավ Կիեւում՝ Լեոնիդ Կուչմային տապալելու ծրագիրը կազմելու համար:

Ընտրությունների եւ քաղաքացիական անհնազանդության միջոցով ժողովրդավարություն հաստատելու մեթոդներն այժմ այնքան են հղկված, որ վերածվել են ուրիշի ընտրություններում հաղթելու ուղեցույցի:

Բելգրադի կենտրոնի մի հասարակ շենքում գտնվում է «Ոչ բռնի դիմադրության կենտրոն» անվամբ կազմակերպության գրասենյակը, որտեղ աշխատում են համակարգչին գերազանց տիրապետող երիտասարդներ: Ցանկանում եք իմանալ, թե ինչպես հաղթել լրատվամիջոցները, դատարանները, անվտանգության մարմիններն ու ընտրական տեղամասերը վերահսկող վարչակարգին. վարձեք բելգրադցի այս երիտասարդ ակտիվիստներին: Կազմակերպությունն առաջացել է «ОТПОР» («Հակահարված») ուսանողական շարժման հիմքի վրա՝ ուղղված Միլոշեվիչի վարչակարգի դեմ: Այդպիսի շարժման բրենդինգի համար նման սուր, կարճ անվանումն անչափ կարելու է: Վրաստանում, անցյալ տարվա հեղափոխության ժամանակ, նույնատիպ ուսանողական շարժումը կոչվում էր «Կմարա» («Բավ է»), Բելառուսում՝ «Зыць», Ուկրաինայում՝ «Тора»: Բացի այդ, «ОТПОР»-ը հորինել էր պարզ եւ հզոր կարգախոս, որին 2000թ. Սերբիայում ամենուրեք կարելի էր հանդիպել: Այն կազմված էր երկու բառից՝ «gotov je» («վերջ նրան»)։ Խոսքն, անշուշտ, Միլոշեվիչի մասին էր: Վարպետորեն մտածված մարքեթինգային ատրիբուտիկան զուգորդվում էր սեղմված բռունցքի պատկերմամբ սեւ-սպիտակ լոգոտիպով: Ուկրաինայում կա այս «ցուցադրական քարոզչության» սեփական համարժեքը՝ ժամացույց, որը խորհրդանշում է Կուչմայի վարչակարգի օրերի հաշված լինելը:

Մահակներ, ներկով սրվակներ եւ ինտերնետ-կայքեր՝ ահա երիտասարդ ակտիվիստների զենքը: Ծաղրն ու փողոցային երգիծական ներկայացումները նույնպես դրսևորել են իրենց՝ որպես մարդկանց մեջ վախը հաղթահարելու եւ իշխանությունների զայրույթը հարուցելու խիստ հաջողակ միջոց:

Նախորդ տարի, նախքան Վրաստանի նախագահ դառնալը, պարոն Սահակաշվիլին, որը, ի դեպ, կրթություն է ստացել ԱՄՆ-ում, զանգվածային անհնազանդության կազմակերպման տեխնոլոգիաների դասընթացներ անցնելու նպատակով՝ Թբիլիսիից մեկնեց Բելգրադ: Բելառուսի ամերիկյան դեսպանությունը կազմակերպեց տեղի երիտասարդական ընդդիմության առաջնորդների այցը Մերձբալթիկա, որտեղ նրանք հանդիպեցին Բելգրադից ժամանած սերբերի հետ: Ինչ վերաբերում է բուն Սերբիային, ապա, հաշվի առնելով Բելգրադում առկա թշնամական մթնոլորտը, ամերիկացիները վարչակարգի տապալումը կազմակերպեցին հարեւան Հունգարիայի տարածքից՝ Բուդապեշտից ու Սեգեդից:

Ընտրությունների նախօրեին Ուկրաինա այցելեցին մի քանի սերբ ակտիվիստներ, սակայն բելգրադյան «առաջամարտիկ» Ալեքսանդր Մարիչին նույնիսկ սահմանից են հետ դարձրել:

Ձանգվածային այս արշավների կազմակերպմանը մասնակցող հիմ-

նական ամերիկյան հաստատություններն են՝ ժողովրդավարական կուսակցությանն առընթեր Ազգային ժողովրդավարական ինստիտուտը, Հանրապետական կուսակցությանն առընթեր Միջազգային հանրապետական ինստիտուտը, Պետդեպարտամենտը, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը (USAID), ինչպես նաև՝ «Freedom House» ոչ կառավարական կազմակերպությունը եւ միլիարդատեր Ջորջ Սորոսի Բաց հասարակության ինստիտուտը:

Ռազմավարության մշակման ընթացքում, ֆոկուս-խմբերի կազմակերպման ու հասարակական կարծիքի հարցախույզերի տվյալների օգտագործման համար վարձվում են ամերիկյան սոցիոլոգիական գործակալություններ եւ արհեստավարժ խորհրդատուներ: Իշխող վարչակարգի տապալման համար անհրաժեշտ է, որպես կանոն, անջատ ընդդիմությանը միավորել միասնական թեկնածուի շուրջ: Այդպիսի առաջնորդ ընտրում են՝ ելնելով գործնական եւ անաչառ նկատառումներից, թեկուզ նա հակամերիկյան կողմնորոշում ունենա:

Սերբիայում ամերիկյան «Penn, Schoen and Berland Associates» սոցիոլոգիական գործակալությունը պարզեց, որ ընդդիմության արեւմտամետ առաջնորդ Ջորան Ջինջիչը (հետագայում նա սպանվեց) երկրում համբավ չի վայելում եւ արդար ընտրություններում Միլոշեւիչին հաղթելու հնարավորություն չունի: Նրան համոզեցին զիջել առաջատարի դերը Արեւմուտքի հակառակորդ Վոյսլավ Կոշտունիցային:

Բելառուսում ԱՄՆ պաշտոնական ներկայացուցիչներն ընդդիմադիր կուսակցություններին հրահանգեցին պաշտպանել արհմիութենական մռայլադեմ առաջնորդ Վլադիմիր Գոնչարիկին, քանզի նա Լուկաշենկոյի կողմնակիցներից շատերի մոտ ճանաչում ուներ:

Ուսանողական շարժումից ու միասնական ընդդիմությունից բացի՝ *ժողովրդավարացման ամերիկյան կադապարի* մյուս առանցքային տարրն է, այսպես կոչված, «ձայների զուգահեռ հաշվումը»՝ որպես հակակշիռ ընտրական նենգափոխումներին, որոնց շատ են սիրում դիմել ժողովրդականությունն չվայելող վարչակարգերը: Ուկրաինայի ընտրություններին ներկա էին նաև արտերկրյա արհեստավարժ դիտորդներ այնպիսի կազմակերպություններից, ինչպիսին է Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության կազմակերպությունը (ԵԱՀԿ), սակայն, ինչպես նախորդ նմանատիպ ընտրություններում, ուկրաինական ընտրաշավի ժամանակ նույնպես հստակ երեւում էր, որ ողջ երկրով մեկ գործում են հազարավոր տեղական դիտորդներ, որոնց ուսուցանել եւ ծախսերը հոգացել էին արեւմտյան կազմակերպությունները:

Ընտրություններին հետեւելու նպատակով «տարածաշրջանային խոշորագույն քաղաքացիական արշավի» կազմակերպմանն ու ֆինանսա-

վորմանը, որտեղ աշխատում էին հազարից ավելի ուսուցում անցած դիտորդներ, մասնակցել են ԱՄՆ «Freedom House» հիմնադրամը եւ ժողովրդավարական կուսակցությանն առընթեր Ազգային ժողովրդավարական ինստիտուտը: Նրանք ընտրատեղամասերի ելքերի մոտ կազմակերպում էին նաեւ մարդկանց հարցումներ, համաձայն որոնց՝ արդեն կիրակի երեկոյան պարզվեց, որ Յուլչենկոն իր մրցակցից առաջ է անցել 11%-ով: Եվ հատկապես դրանց ֆոնի վրա տեղի ունեցավ հետագա իրադարձությունների մեծ մասը:

Ընտրատեղամասերի ելքերի մոտ հարցումները համակարգի ամենակարեւոր տարրերն են: Նրանք քարոզչական կռվում խլում են նախաձեռնությունը իշխող վարչակարգից (քանզի դրանց արդյունքներն ավելի շուտ են հայտնի դառնում, քան պաշտոնական տվյալները), վայելում են մամուլի հատուկ ուշադրությունը, եւ իշխանությունները հայտնվում են ոչ թե հաստատողի, այլ պատասխանողի վիճակում:

Ժողովրդավարացման ամերիկյան կադապարի վերջին փուլը կենտրոնացված է այն միջոցների վրա, որոնք հարկավոր է ձեռնարկել, երբ գործող իշխանությունը փորձում է ժողովրդից խլել ընտրություններում տարած հաղթանակը:

Բելառուսում նախագահ Լուկաշենկոն իրոք հաղթեց. այնպես որ՝ հակազդումն էլ այնտեղ նվազագույն չափի էր: Բելգրադում, Թբիլիսիում (եւ այժմ՝ Կիեւում), որտեղ իշխանությունները սկզբում փորձում էին կառչել իրենց աթոռներից, հիմնական հանձնարարականն էր. համբերությունը չկորցնել, բայց վճռականորեն տրամադրվել, կազմակերպել քաղաքացիական անհնազանդության զանգվածային գործողություններ, որոնք, մնալով խաղաղ եւ օրինական, կկարողանան դրդել իշխանությանը՝ դիմել ուժային ճնշումների:

Եթե Կիեւի իրադարձությունները հաստատեն, որ Միացյալ Նահանգները սեփական ռազմավարության օգնությամբ իրոք կարող է աջակցել այլ երկրների ժողովուրդներին՝ շահել ընտրություններն ու վերցնել իշխանությունը, ապա Ամերիկան, անշուշտ, կփորձի այն օգտագործել նաեւ հետխորհրդային տարածքի այլ երկրներում: Հետեւե՛ք Մոլդովային եւ Կենտրոնական Ասիայի ավտորիտար պետություններին:

**The Guardian**  
**Մեծ Բրիտանիա**

**ԻՍԼԱՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**Ե. Ձագորնուվա**

Չնայած մի շարք պաշտոնական անձանց հայտարարություններին, թե Թուրքիան աշխարհիկ պետություն է, իսլամի ազդեցությունը նրա արտաքին ու ներքին քաղաքականության վրա բավական զգալի է, ինչն արտացոլում է թուրք հասարակության սոցիալական իրականությունը:

Թուրքիայի Հանրապետության առաջին նախագահ Քեմալ Աթաթուրքն իսլամի դրույթներին հետեւելու մեջ տեսնում էր թուրք հասարակության՝ եվրոպական երկրների մակարդակին հասնելու ճանապարհին ծառայած հիմնական խոչընդոտներից մեկը: Կողմնորոշվելով դեպի Արեւմուտք՝ նա անցկացրեց թուրքական հանրապետության քաղաքական եւ սոցիալական կյանքի վրա կրոնի ազդեցության նվազեցմանը կոչված մի շարք բարեփոխումներ: Մասնավորապես, շարիաթին փոխարինեց քաղաքացիական օրենսգիրքը, արաբական այբուբենին՝ լատինականը, կրոնական դպրոցները լուծարվեցին, մտցվեց կրթության միասնական համակարգ, հանգստյան օրն ուրբաթից տեղափոխվեց կիրակի: Թուրքիայի պաշտոնական գաղափարախոսական ուսմունքը դարձավ լաիցիզմը (պետության եւ կրթության աշխարհիկ բնույթը հռչակող ուսմունք), որը արձանագրված է 1937թ. սահմանադրությունում:

Կրոնական հաստատությունների հանդեպ կոշտ դիրքորոշումներն ու *թարիքատների* (մահմեդական օրդեններ) գործունեության արգելումը հանգեցրին մի շարք միությունների, օրդենների, աղանդների, ընկերությունների առաջացմանը, որոնք իրենց գործունեությունն իրականացնում էին ընդհատակյա պայմաններում: Որպես կանոն, նրանք ֆինանսավորվում էին ունեւոր մահմեդականների կողմից: Արգելված միություններն սկսեցին բնակչության տարբեր խավերի մեջ ժողովրդականություն վայելել եւ շուտով իրենց շարքերը ներգրավեցին մեծ թվով կողմնակիցների:

Աթաթուրքի մահից (1937թ.) հետո թուրք հասարակությունն սկսեց հեռանալ «ծայրահեղ լաիցիզմից»: 1945թ. Ազգային ժողովն ընդունեց մի շարք որոշումներ եւ ուղղումներ, որոնք հանգեցրին պետության հիմնական օրենքում առանձին դրույթների վերանայմանը: Թուրքիայում սկսեցին բացվել մեդրեսեներ, որտեղ հաճախումը դադարեց դիտվել որպես անցյալի վերապրուկ: Գլխաշոր կրել ցանկացող թուրք կանայք արդեն այնպես չէին հալածվում, ինչպես առաջին նախագահի օրոք: Հավա-

տացյալների նկատմամբ հասարակական կարծիքը դարձավ առավել հանդուրժողական: 1951թ. Ա. Մենդերեսի կառավարությունը պաշտոնապես թույլատրեց բացել «Իման Խաթիփ»-ներ (բարձրագույն հոգեւոր դպրոց), ինչը հնարավորություն տվեց իմամներ եւ քարոզիչներ պատրաստել երկրի ներսում: Թուրքիայում լայնորեն ծավալվեց նոր մզկիթների ու մեդրեսեների շինարարություն: Ավելին, Մենդերեսը հանդես եկավ իսլամական մոտեցումների վրա հիմնված մերձավորարեւելյան ռազմական դաշինք ստեղծելու առաջարկությամբ:

Այն հարցը, թե ինչը Թուրքիայի համար լաիցիզմից իսլամական հասարակության անցնելու խթան հանդիսացավ, մնում է վիճելի: Մի կողմից, տեսնելով բնակչության շրջանում կրոնի հանդեպ աճող հետաքրքրությունը՝ իշխանությունները ստիպված էին գնալ փոխզիջումների, քանզի տվյալ իրադրությունում իսլամական կազմակերպությունների գործունեության վրա հսկողությունը բերում էր առավել նշանակալից արդյունքներ, քան նրանց հետ բաց առճակատումը: Մյուս կողմից, հենց թուրք քաղաքական եւ հասարակական գործիչների շրջանում բավական շատ էին ոչ միայն կրոնական միությունների կողմնակիցները, այլեւ անդամները: Այսպես, նախկին նախագահ Թ. Օզալը «Նաքշբանդի» օրդենի հետեւորդ էր: Ջբաղեցնելով պետության ղեկավարի պաշտոնը՝ նա պաշտոնապես թույլատրեց առանձին մահմեդական օրդենների գործունեությունը, հավանություն տվեց նոր մզկիթների կառուցմանն ու կրոնական դպրոցների բացմանը: Չնայած զինվորական վերնախավի կողմից արված քննադատություններին, Օզալը Մեքքա երկու անգամ ուխտագնացություն կատարեց:

Խորհրդային Միության փլուզումից հետո թուրքական կառավարությունը որոշակի քայլեր ձեռնարկեց թյուրքական հանրապետությունները Թուրքիայի հովանու ներքո միավորելու ուղղությամբ: Ընդգծելով էթնիկական ազգակցությունը եւ տնտեսական փոխշահավետ համագործակցության հեռանկարները՝ Անկարան վկայակոչեց նաեւ ենթադրյալ դաշնակիցների կրոնական նույնությունը: Թուրք էմիսարներն այդ հանրապետություններում լայն գործունեություն ծավալեցին: Նրանք բազմակողմանի աջակցություն ցուցաբերեցին ամեն տեսակ իսլամական միությունների, որոնցից էին «Բիրլիքը», «Թուրքեստանը», «Ալաշը», «Ժելթրքսանը» եւ ուրիշներ: Իր հերթին, «իսլամական գործընկերների հետ հարաբերությունների առավել արդյունավետ զարգացման» նպատակով Թուրքիայում հիմնվեց «Սերխաթ» կազմակերպությունը, որը «Նուրջուլար» օրդենի օրգանական մասն էր: Այդ ժամանակաշրջանում օրդենը եռանդուն պաշտպանություն էր ստանում ինչպես Թուրքիայի կառավարության, այնպես էլ՝ երկրի մի շարք գործարարների կողմից, որոնցից հատկապես առանձնաճանաչ էին «Ասիա» բանկի ներկայացուցիչները:

Թուրքիայի քաղաքականությունում իսլամականացումն իր գագաթնակետին հասավ 1995թ. ընտրություններում «Նաքշբանդի» օրդենի մյուրիդ Ն. Էրբաքանի գլխավորած «Բարօրության կուսակցության» (ԲԿ) հաղթանակով: Նախընտրական քարոզարշավի ընթացքում Էրբաքանը բազմիցս հայտարարել էր, թե ԲԿ-ն հանդես է գալիս Արեւմուտքի հետ Թուրքիայի մերձեցման դեմ եւ գտնում է, որ նրա տեղը մահմեդական երկրների շարքում է: Վերոհիշյալ ժամանակահատվածում թուրք հասարակությունն արդեն առավելագույնս նախապատրաստված էր կողմնորոշիչների փոփոխությանը: Չնայած տնտեսական բարենորոգումներին, երկրում աճում էր գործազրկությունը, շարունակվում էր լիրայի արժեզրկումը: Այդ պայմաններում աշխուժանում էին բավական թվով իսլամական կազմակերպություններ, որոնք իրենց շարքերն էին ներգրավում ավելի ու ավելի շատ կողմնակիցների: Այսպես, եթե 70-ականների սկզբում նրանց աջակցում էր բնակչության մոտ 11%-ը, ապա 90-ականների կեսերին այդ ցուցանիշը կազմեց 21,5%:

Գալով իշխանության՝ Էրբաքանի կառավարությունն իրականացրեց մի շարք քայլեր, որոնք արմատապես վերակառուցեցին թուրք հասարակության ապրելակերպը: Նա կանանց պաշտոնապես թույլատրեց պետական եւ ուսումնական հաստատություններում կրել գլխաշոր, իսլամական ինստիտուտների շրջանավարտների դիպլոմները հավասարեցրեց աշխարհիկի հետ, կրճատեց աշխատանքային ժամերը ռամադան ամսում եւ այլն: Երկրում ծավալվեց նոր մզկիթների շինարարություն, որոնց կառուցման բյուջետային հատկացումները մի քանի անգամ գերազանցում էին պետության կողմից արդյունաբերական ձեռնարկությունների շինարարության համար տրամադրված միջոցները: Որպես Եվրամիությանը հակակշիռ, Թուրքիան ձեռնամուխ եղավ իսլամական «մեծ յոթնյակի» ստեղծմանը, որտեղ մտան Իրանը, Պակիստանը, Եգիպտոսը, Մալայզիան, Ինդոնեզիան եւ Նիգերիան:

Չամենատաբար կարճ ժամկետում Էրբաքանի կառավարությունը երկիրը նետեց էլ ավելի խոր ճգնաժամի մեջ, քան ընտրություններում ԲԿ հաղթանակից առաջ էր: Տնտեսական հատվածի իսլամականացումը զգալիորեն ավելացրեց ընդհանուր տարեկան արժեզրկումը, որը կազմեց 80%: Այդ պայմաններում երկրի զինվորականությունը որոշեց պաշտոնանկ անել վարչապետ Էրբաքանին: 1997թ. իշխանության եկավ կոալիցիոն կառավարությունը՝ «Չայրենիքի կուսակցության» առաջնորդ Մ. Յըլմազի գլխավորությամբ: Թուրքիայի սահմանադրական դատարանը ԲԿ-ին մեղադրեց պետության աշխարհիկ կարգի ապակայունացմանն ուղղված գործողությունների եւ հասարակությունում քաղաքական պատերազմ տանող իրավիճակ ստեղծելու մեջ: Այս պատճառով ԲԿ-ն լուծար-

վեց, իսկ էրբաքանին արգելվեց զբաղվել քաղաքական գործունեությամբ:

Նոր կառավարությունը որոշում ընդունեց մեծացնել պատասխանատվությունը «աշխարհիկ հագուստի կրման եւ իսլամամետ միտինգներին մասնակցելու մասին» վարքականոցի խախտման համար: Ցրվեցին մի շարք մահմեդական օրդեններ եւ իսլամամետ կազմակերպություններ, երկրում կտրուկ նվազեց կրոնական ուսումնական հաստատությունների թվաքանակը: Դատախազությունը «Նուրջուլար» օրդենի գործողությունները բնութագրեց որպես հակասահմանադրական, ինչի կապակցությամբ 1999թ. որոշում կայացրեց նրա գործունեությունն արգելելու մասին:

Իր հերթին, երկրի զինվորական ղեկավարությունում նույնպես անցկացվեցին կադրային վերադասավորումներ: Հաշվի չառնելով պաշտոնը եւ աստիճանը՝ զինված ուժերի կազմից հեռացվեցին 170-ից ավելի սպաներ: Որպես կանոն, նրանց վերագրեցին «իսլամիստների հետ կապեր» եւ «հակասահմանադրական գործողություններ»: Մի շարք դեպքերում հեռացումների առիթ ծառայեցին սպաների ընտանիքների անդամների, այլ ոչ անձամբ իրենց՝ մահմեդական ավանդույթների հետեւորդ լինելը: Այսպես, բանակից հեռացվեցին մի քանի սպաներ, որոնց կանայք կանոնավոր կերպով հաճախում էին մզկիթ եւ պահք պահում:

Գնահատելով ստեղծված իրադրությունը՝ նախագահ Սուլեյման Դեմիրելը կրոնական գործիչներին կոչ արեց «չօգտագործել մզկիթները քաղաքական խարդավանքների համար» եւ հայտարարեց, թե «Թուրքիան այլեւս չի ղեկավարվելու իսլամիստների ցուցումով եւ չի պաշտպանելու նրանց սադրիչ գործողությունները»: Նախագահն այդպիսի գործողություններից նկատի ուներ նաեւ անցյալի այն միջադեպը, երբ ԲԿ-ից պատգամավոր Ս. Քավաքչին Թուրքիայի Ազգային Մեծ Ժողովի նիստերի դահլիճ էր ներկայացել գլխաշորով: Քավաքչիի արարքը գնահատվել էր որպես վիրավորանք կառավարությանը եւ լայն արձագանք գտել թուրք հասարակությունում: Պատգամավորը զրկվեց իր մանդատից, իսկ այնուհետեւ՝ նաեւ Թուրքիայի քաղաքացիությունից:

2000թ. ապրիլին պետության ղեկավարի պաշտոնը զբաղեցրեց Ահմեդ Սեզերը: Նա հանդես եկավ ժողովրդավարական բարեփոխումների հետեւողական անցկացման եւ հասարակության աշխարհիկ մոդելի օգտին: Այնուամենայնիվ, չնայած կառավարության ձեռնարկած կոշտ միջոցներին, իսլամականացման գործընթացը Թուրքիայում շարունակվում է: «Իմամ Խաթիփ»-ների քանակը մշտապես աճում է: Եթե Մեմլեքետի կառավարության ժամանակ նրանց թիվը տասնյակից չէր անցնում, ապա Դեմիրելի օրոք այն հասավ մոտ 200-ի, իսկ ներկայումս մոտենում է հազարին: Թուրքիայի տարածքում շարունակում են գործել «Հեզբուլահը», (պաշտոնապես արգելված է 2000թ.), «Իսլամական փրկության բանակը»,



«Իսլամական Մեծ Արեւելքի կողմնակիցների ճակատը», «Իսլամական ջիհադը» եւ «Իսլամական շարժման կազմակերպությունը»: Նրանց հաշվին են մեծ թվով ահաբեկչական գործողություններ, քաղաքական ու հասարակական գործիչների, գործարարների եւ լրագրողների սպանություններ (որոնցից են՝ Ստամբուլի համալսարանի պրոֆեսոր Օ. Թյուքթեմը, «Ջումհուրիեթ» թերթի մեկնաբաններ Ու. Քաֆթանջիգլուն եւ Ու. Մունջուն, «Աթաթուրքի կողմնակիցների միության» ղեկավար Մ. Աքսոյը, քաղաքագետ Ա. Քիշլալին եւ այլոք):

Չնայած կրոնական գործիչների հայտարարությանը, թե «ներկայումս մզկիթն անջատված է քաղաքականությունից», մի շարք կազմակերպությունների ու միությունների գործունեության վերլուծությունը հակառակն է վկայում: «Նաքշբանդի», «Նուրջուլար», «Սուլեյմանիե», «Մեւլեւի», «Բեքթաշի» եւ այլ օրդենների հետեւորդները Թուրքիայի հասարակական կյանքի բոլոր ոլորտներում ամուր դիրքեր են զբաղեցնում: Այսպես, Ա. ալ-Սեւամիի հիմնած «Նաքշբանդի» օրդենի ղեկավարման ներքո է գտնվում Թուրքիայի լրատվամիջոցների մեծ մասը, որոնցից են «Թյուրքիե», «Միլի գազեթե» ու «Ենի շաֆախ» թերթերը: «Նաքշբանդին» հրատարակում է նաեւ «Իսլամ» ու «Քադին վե աիլե» հանդեսները: Օրդենին են պատկանում «ԹժՌԹ», «Կանալ եդի», «Իքի բինե դոչրու» հեռուստատալիքները, «Իքրա» եւ «Խուդուր» ռադիոկայանները:

Թուրքիայում այսօր առանցքային դիրքերից մեկը շարունակում է զբաղեցնել «Նուրջուլար» օրդենը (նրա գործունեությունը նորից թույլատրված է - խմբ.): Չնայած թուրքական ղեկավարությունը օրդենի գոյատեւման ողջ ժամանակահատվածում բազմիցս փոխել է նրա գործունեության հանդեպ իր գնահատականը, «Նուրջուլարը» ոչ միայն կարողացավ դիմանալ, այլեւ զգալիորեն ամրապնդեց իր իշխանությունը երկրի քաղաքական շրջաններում: Օրդենին են պատկանում «Սիզիմի», «Ենի էմիդ», «Աքսիոն», «Քոբրի» հանդեսները, «Ենի Ասիա» թերթը, «Սաման փալու» հեռուստատալիքը, «Մուրալ ՖՄ» եւ «Բուրժ» ռադիոկայանները:

Իրականում այս կամ այն օրդենին պատկանող ՁԼՄ ցանկն անհամեմատ ավելի մեծ է: Սեփական տեղեկատվական մարմիններից գատ, օրդեններն ունեն նաեւ իրենց բանկերը: Օրինակ, «Նաքշբանդի»-ին է պատկանում «Ֆիհանս» բանկը: Օրդենների հետեւորդներ են ամեն տեսակ մասնագիտությունների ներկայացուցիչներ: Նրանց մեջ կան ճանաչված շատ գործարարներ, գիտնականներ ու հասարակական գործիչներ:

Այսպիսի հարցադրման դեպքում աշխարհիկ մոդելի պահպանման Թուրքիայի հեռանկարները դառնում են բավական խնդրահարույց:

## ՑԵՂԱՅՆԱՑԻՐ, ՑԵՂԱՅՆԱՑՈՒՐ

Ցեղակրօնութիւնը ո՛չ միայն գեղեցիկ անուն մըն է, այլեւ ադամանդեղէն յաւիտենական ներքին բովանդակութիւն մը, որ դարերուն դիմանալու, տոկալու ոյժ եւ անասանութիւն ունի իր մէջ: Ցեղակրօնութիւնը վարդապետութիւն մըն է, որ ո՛չ մէկ ժողովուրդի այնքան անհրաժեշտ է, որքան հայ ժողովուրդին: Ցեղակրօնութեան մէջ կայ անցեալի ապրում, ներկայի կեանք ու պայքար, ապագայի նուաճում եւ յաւիտենականի տենչ:

Ցեղակրօնութիւն կը քարոզենք, որովհետեւ կ'ուզենք, որ հայը հատուածի մը կամ կողմի մը, կուսակցութեան մը չպատկանի, եւ այսպիսով հայութիւնը ճակատներու, կողմերու կամ կուսակցութիւններու չբաժնուի, մեր ազգային կեանքը ներքին ճակատներ, ներքին պայքարներ, ոյժերու ջլատում չունենայ, այլ կեդրոնանայ, միաձոյլ եւ միական դառնայ: Ցեղակրօնութիւնը դէմ է ամէն ներքին հատուածականութեան եւ տարանջատումներու, եւ միակ գաղափարաբանութիւնն է, որ կրնայ բոլոր հայերը միացնել, որովհետեւ կուսակցութիւն մը չէ, կողմնակի կամ մասնաւոր ընկերային ուղղութեան մը ջատագովը չէ՛, այլ ուղղակի ցեղային, համահայկական շարժում մըն է, որ խտրութիւն չի՝ դներ իր անդամներուն միջեւ, եւ նկատի չ'առնէր անոնց ընկերային դիրքն ու կրօնական դաւանանքը: Ցեղակրօնութեան համար կարեւորը հայն է, բաւ է, որ ան իր մէջ չունենայ կուսակցական եւ անջատական միտումներ, չարհամարիէ մեր անցեալը, չյուսահատի ներկայի անյաջողութիւններէն եւ վառ յոյսով նայի մեր վաղուան:

Արդ, Ցեղակրօնութիւնը հայութեան կը քարոզէ՝ վերջ կուսակցականութեան, վերջ ներքին պայքարներու եւ պառակտումներու, վերջ ոյժերու ջլատման եւ կեդրոնախոյս, տարանջատ գործունէութեան: Մէկ ճամբայ՝ Յայաստանի ճամբան, մէկ գործ՝ Ցեղի ապահովութիւնն ու յարատեւումը հայրենի հողին վրայ:

Ցեղակրօնութիւնը ցեղային հարցեր արծարծելէ աւելի, վերանորոգչական, հոգեւոր արիութեան եւ մեծագործութեան շարժում է: Ցեղակրօնութիւնը նոյն ցեղին անդամները եղբայրացնելու, կեանքը հզօրացնելու, կամքերը միաձուլելու, աշխատանքը արդիւնաւորելու եւ ցեղի կենսական պահանջները բաւարարելու գաղափարաբանութիւնն է:

«Ցեղայնանալ եւ ցեղայնացնել»։ Ցեղայնանալ հոգիով, ցեղայնանալ մտքով եւ ձեր ցեղայնացումը ցոյց տալ կենդանի՝ օրինակով, գործով եւ

գործունեությամբ: Ի՞նչ կը հասկնաք ասկէ: Ցեղայնանալ ըսելով պիտի հասկնաք՝

Ա. Հրաժարում կուսակցականութենէ, կողմնապաշտութենէ եւ ուրիշ հայ մը ատելէ եւ անոր հետ պայքարելէ:

Բ. Աշխատիլ ներքին ճակատներու վերացման, ուժերու եւ գաղափարներու կեդրոնացման, ներքին տկարութեան յաղթահարման:

Գ. Վերանորոգուիլ հոգիով, գաղափարով եւ գործունեությամբ, հինը չմնալ, ինքզինքը չստորագնահատել:

Դ. Հայ անցեալին հանդէպ պաշտամունք ունենալ, ներկան չարհամարիել եւ փայլուն ապագայ տեսնել եւ անոր համար աշխատիլ:

Ե. Ամէն բանէ վեր նկատել Ցեղն ու Հայրենիքը եւ պատրաստ ըլլալ անոնց համար, անոնց դատին համար մեռնելու: Այս երկու սրբութենէն զատ ուրիշ աստուածութեան չծառայել, եւ միշտ մտովի կրկնել, որ Ցեղիս եւ Հայրենիքիս զինուորն եմ, ես կարող եմ անցնիլ, բայց Ցեղս եւ Հայրենիքս անանցանելի եմ, ասոր համար ամէն բան կը զոհեմ, որ անոնք յաւետ կանգուն մնան:

Զ. Կ'ուզեմ ցեղայնանալ, որովհետեւ Ցեղիս միութիւնը, Ցեղիս յառաջդիմութիւնը, Ցեղիս գոյութիւնն ու յաւիտենականացումը այս գաղափարի իրականացումով աւելի կը շահի[Մ] եւ աւելի կը բարգաւաճի[Մ]:

Է. Համոզուած եմ, որ ամէն կուսակցական, դասակարգային եւ կրօնական ըմբռնում կարող է պատմութեան անցնիլ, բարեշրջուիլ կամ ձեւափոխուիլ, բայց ցեղային գաղափարաբանութիւնը անմահ է, անանցանելի է եւ անշիջելի է. ան պիտի տեսէ որքան որ տեսէ ինքը՝ Ցեղը:

Այս է ցեղայնացումը, տեսակ մը գերհայու տիպ, որ չունենայ այսօրուան պայքարունակ եւ թայֆայականացած հայու տխուր բարքերն ու ունայնութիւնները, որոնք ամէնայն դէպս, ցանկալի եւ գնահատելի չեն: Եւ եթէ այս ձեւով ցեղանայ հայը եւ ցեղայնացնէ իր նմանը, այն ատեն հայ իրականութեան ներկայի մշուշոտ պատկերը հիմնովին պիտի փոխուի եւ մեր ճամբան, որ այսօր այնքան մառախլապատ է ու զարտուղի, պիտի պարզուի եւ հարթուի դէպի մեծ նպատակակէտը, դէպի Ցեղի իտեալին իրականացումն ու պսակումը:

Մեզ համար, Ցեղակրօնութեան մէջ, արեան հետ, եւ թերեւս քիչ մը աւելի չափով, կարելոր է ոգին, *ընդհանուր առմամբ հայ մարդը իր ներքին ապրումներով եւ ձգտումներով, նկարագրով եւ գործով:*

Մեր ըրածը վերանորոգչական, հոգեփոխական շարժում է, նոր ըմբռնումներով, նոր գաղափարներով, բայց ցեղային հին ձգտումներով. նոր հայ ստեղծելու տենչ, որովհետեւ դժգոհ ենք այսօրուան հայէն, որ ինչպէս ըսինք, ինքն իր մէջ պառակտուած է, չար է, նախանձոտ, ան-

հանդուրժող, կեդրոնախոյս, տկար, մասամբ անհաւատ, անցեղաճանաչ եւլն. եւլն.:

Ցեղակրօն ենք եւ մեր բոլոր հայ եղբայրներուն սրտի ցաւով կը նայինք, երբ տակաւին անոնք կ'ուզեն երէկուան արիւնոտ ու փշոտ ճամբէն քալել, եւ տակաւին կը ցանկան պառակտուած մնալ եւ տնաքանդ պայքարներու հետամտիլ, երբ տակաւին չեն ցնցուիր, չեն զգաստանար եւ շուրջերնին չեն նայիր, տեսնելու եւ զգալու համար, թէ ո՛ր ենք մնացած, ինչ կ'ընենք ու ինչպէ՛ս պէտք է աճապարենք, դարձեալ յուսախաբ չըլլալու եւ մեր բախտը չողբալու համար վաղը:

Ուրեմն, կրկնեմ դարձեալ, բոլորի՛ն, մեծի՛ն եւ պզտիկի՛ն, օրիորդի՛ն եւ տիկինի՛ն, պատանիի՛ն եւ երիտասարդի՛ն.

*Ցեղայնացի՛ր, ցեղայնացո՛ւր:*

**Ցեղայնացի՛ր**, որ հայը վերանորոգուի, հոգեփոխուի, հին ախտաւորը չմնայ, ատելութեամբ եւ մաղձով լեցուած չըլլայ իր նման հայուն հանդէպ, նոր ու կատարեալ, բարձրագոյն հայու տիպ մը ըլլայ:

**Ցեղայնացո՛ւր**, որպէսզի հայ կեանքը բարեփոխուի, մշուշը փարատի, սէրը եւ համերաշխութիւնը ծիածանեն եւ մեր կեանքը անկախ հայրենիքի մէջ ծաղկի ու զարգանայ:

Մեր սերունդին եւ բոլոր գալիք սերունդներուն հաւատոյ հանգանակ մըն է, որ կը ձգենք որպէս յաւիտենական ճշմարտութիւն.

*Ցեղայնացի՛ր, ցեղայնացո՛ւր:*

**Օ. Զարմունի\***

---

\* Օնիկ Զարմունի (Փանիկյան) 1930-40-ական թվականներին եղել է Բուլղարիայի Ցեղակրոն կազմակերպության գործուն անդամներից, Գարեգին Նժդեհի եւ Հայկ Ասատրյանի զինակիցը:

Հոդվածը, որ ներկայացված է հատվածաբար, գրվել է, թերեւս, 1942թ.: Այն մեզ է հասել ձեռագիր տեսքով եւ Հայրենիքում տպագրվում է առաջին անգամ:

## **Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

<b>Հոգե-նՅՈՒԹԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ ԵՎ ՄԵԾ ԳԱՂԱՓԱՐԸ</b> .....	<b>1</b>
<b>Գեւորգ Յազըճյան</b>	
<b>ՀԱՅՈՒԹՅԱՆ ԱՅԼԱԴԱՎԱՆ ԵՎ ԱՅԼԱԼԵԶՈՒ ԽՄԲԵՐԸ</b>	
<b>ՍԻՐԻԱ-ԼԻԲԱՆԱՆՈՒՄ</b> .....	<b>2</b>
<b>Ռուբեն Խուրշուդյան</b>	
<b>ՄԱՅՎԱՆ ԱՐՎԵՍՏԸ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ</b> ....	<b>10</b>
<b>Գագիկ Տեր-Հարությունյան</b>	
<b>ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐՆ ՈՒԿՐԱԻՆԱՅՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ</b> .....	<b>16</b>
<b>Գագիկ Տերտերյան</b>	
<b>ԲԵԼԱՌՈՒՄ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՐՐՈՐԴ ՈՒՂԻ</b> .....	<b>21</b>
<b>Կարեն Վերանյան</b>	
<b>ՎՐԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ</b>	
<b>ԱԴՐԲԵՋԱՆԻՆ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՅԻՆ</b> .....	<b>25</b>
<b>Սարգիս Հարությունյան</b>	
<b>ԻՍԼԱՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ</b> .....	<b>29</b>
<b>Իեն Թրեյնոր</b>	
<b>ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱՑՄԱՆ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԿԱՂԱՊԱՐԸ</b> .....	<b>33</b>
<b>Ե. Զազորնովա</b>	
<b>ԻՍԼԱՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ</b>	
<b>ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ</b> .....	<b>37</b>
<b>Օ. Զարմունի</b>	
<b>ՑԵՂԱՅՆԱՑԻՐ, ՑԵՂԱՅՆԱՑՈՒՐ</b> .....	<b>42</b>

*Շապիկի վրա պատկերված է  
Քարե լիճը (Արագածի ստորոտում)*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի  
Հանրապետական կուսակցության հրատարակություն  
**Խմբագրական խորհուրդ**  
Երեւան, 375010, Մելիք-Աղանյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:  
Էլ. փոստ՝ hanrapetakan@hkh.am:  
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:  
Պայմանական 3,5 մամուլ: Տպաքանակը՝ 1000:  
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:  
Վկայական՝ ՕՄՄ 000176:  
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: